



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999

ԿԱԹՈՒՂԻԿԵ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՎԱՂԱՐՇԱՊՈՏԱՅ

ԸՆԴ

ՀՈՐԻՑ ՎԱԽՈՐՔԻՑ ՆՈՐԻՆ

ԱՇԽԱՏԱՎԵՐԵԱԾ



ՀԱՅՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ի Վ. ԵՊ. ԵՐԸ. ԵՊԱՅ

Ի ՏՊԱՐՄԱԿ ՄՐՐՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ Էջմիածնէ.

L. 1384

ՈՅԵՒԹ - 1875

ԿԱԹՈՒՂԻԿԵ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԱՑ

ԸՆԴ

281.6

ՀՈՐԻՑ ՎԱԽՈՐՔԻՑ ՆՈՐԻՆ.

ԱՇԽԱՏԱԽՐԱՋ

Ա.ԲԵԼ Ա.ՐԳԵՎԻՍԿՈՊՈՍ ՄԵԽԱՐԵԱՆՑ.

426

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ



Ի Վ Ե Լ Ե Ր Ը Պ Ա Տ

Ի ՏՎԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ Էջմիածնի.



ՅԵՌԵ. Յ. ԱՐԵՆԻ

Վաղարշապատայ պատմութեան երկրորդ հատորն է աւասիկ որ արդ կտպազրի ի լցու ինչպէս յիշած եմք նորա յառաջաբանի մէջ :

Մեր այս աշխատութիւնը ի նիւթ Աթոռոյս Արարատ ամսագրին պատրաստելով, աշխարհաբառ դարձրինք, զոր վաղուց արդէն զրաբառ էինք գըրել . որոյ մէջ Կաթուղիկէ Եկեղեցւոյ և Մենաստանի ստորագրութիւնը ամրողացրած միատեղ ամփոփեցինք. զորս Շահնաթունեան արժանայիշատակ Յոլշաննէս Եպիսկոպոսն առանձին ի զլուխս զլուխս բաժանած է իւր Ստորագրութեան Ա. հատորոյ մէջ, ըստ որոյ և աւելորդ կլինէր մեր աշխատութիւնը. բայց Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ միշտ ողորմութեամբն Աստուծոյ ի հաստատութեան կալով, և միշտ Աթոռ մեծ Քահանայապիտութեան Հայոց,՝ հետեւաբար և միշտ իշնութեան և ինորոգութեան է. ուստի և անհրաժեշտ հարկ կար մեր վերայ ի մի վայր այսպէս ամփոփել Կաթուղիկէ Եկեղեցւոյ և չորից վանօրէից ստորագրութիւնը, և մի առ մի ստորագրել որբան՝ ինչ շնութիւնք եղած են Շահնաթունեան Ստորագրութենէն ետքը՝ ի պայծառութիւն Աթոռոյս :

Եւ որովհետեւ մեծանուն Ներսէս Հայրապետի և իներկաս մեր Վեհափառ Գեորգ Ա. Կաթուղիկոսի շնորհարութիւնն ի սուրբ Կաթուղիկէի աստ որոց և մեծածախ մեծաբրդծութիւնն ի պայծառութիւն սուրբ Եղմածնի ստորագրուած չեին տակաւին, զայն ամենը ամրողացրինք մեք ի մի պատմութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյն Վաղարշապատայ :

Պատմական տեղեկութիւնները քաղեցինք բազմավաստակ Սիմէոն Կաթուղիկոսի Զամբու մատենէն, ինչպէս զրած եմք ծանօթութեան մէջ, համեմատութեամբ ազգային պատմաբանից. իսկ յիշեալ Եկեղեցեաց շենութեանց և նորոգութեանց արձանագիրքը մենք չկրկնեցինք աստէն՝ աւելի չստուրացնելու համար մեր գործը ըստ որում բոլորը տպուած են մի անգամ՝ հանգուցեալ Շահնաթունեանի զրոց մէջ :

28 1386

41384-60

ԵԿԵՂԵՑԻՔ

ՎԱՊԱՐՃԱՊԱՏ ՔԸՆԱԲԻ

Ա. — ԿԱՅՈՒԴԻԿԻ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ ԷջՄԽԱԾԻՆ.

Կաթուղիկէ Եկեղեցի կոչեցաւ առաջին Եկեղեցին Վազարշապատայ՝ ի հրեշտակէն սրբոյն Գրիգորի տեսիլը բացարելու ժամանակին, “Ոսկի խարիսխն վէմն հաստատութեան անշարժութիւնն է. և սիւնն հրեղէն Կաթուղիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամնայն ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոյ ինելքոյ թեւոց իւրոց,, : (Ազաթանգեղոս, Թուղթ ՅԼ.Բ):

Եյս անուանակոչութիւնը Վազարշապատայ Մայր Եկեղեցւոյն կ'տան և առհասարակ մեր ազգի մատենագիրք հըրեշտակի այս բացարութենէն առնլով, որպէս Խորենացին (յԳ. գիրա, գլ. թ. 60.) “Թօղեալ խարսխեաց, ասէ, (մեծն Սահակ զՄեսորով) յԵկեղեցւոջն Կաթուղիկէի, որ ի Վազարշապատ քաղաքի,, :

Եւ վասն զի՝ “Աթոռ Քահանայապետութեան Հայոց,, այս Կաթուղիկէ Եկեղեցին եղաւ, ուր զառաջինն Կաթուղիկոսնստաւ սուրբն Գրիգոր, նորա համար և մեր պատմաբանք Մայր Երիշուցեաց կ'անուանեն զսա իբրև Գլուխ ընդհանուր Եկեղեցեաց Հայստանի, ինչպէս գարձեալ Խորենացին Եշխարհագրութեան մէջ, “Մայր Եկեղեցեաց, ասէ, ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վազարշապատ քաղաքի,, : Եւ Յովհաննէս Կաթուղիկոս, “Մեծ Հայրապետն Հայոց Բարգէն առնէ ժողով Եպիսկոպոսաց ի Կոր քաղաքի, ի սուրբ Կաթուղիկէ, ի Մայրն Եկեղեցեաց Հայոց,, :

Բայց յետոյ այս Կաթուղիկէ Եկեղեցին ի յետագայից կոչ չեցաւ սուրբ Խջմիածին աւելի յարմարութեամբ ի խորհուրդ տեսլեան սրբոյն Գրիգորի, «Տեսի ահաւոր մարդոյ բարձր և ահեղ, որ զառաջն ուներ և զէջն ի վիրուսոտ մինչ ի խոնարհ։ Զայս կերպարան մարդոյ, կվայէ Վգաթանգեղոս, հրեշտակն մեկնեաց ի խորհուրդ տեսչութեանն Աստուծոյ. իսկ այս ահաւոր և շքեղաւոր, որ զառաջն ունի զլուսոյն և զոսկի ուռն ի ձեռին, և բախեաց զսանդարամեսոս, այս տեսչութիւնն Աստուծոյ է, . (ի թուղթն Յ1. Բ.) Իսկ այս տեսչութիւն Աստուծոյ վերագրեցին նոյնպէս յետագայք՝ իջման Վիածին բառնին ձօր. այս մաքով յօրինուած է շարականն «Խջմիածինն ի ձօրէ ևն։ Առանից ապա Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատապատայ կոչուեց Խջմիածին իրրե անուն սեպհական։

Կոչեցին և Ծողակաթ գարձեալ նոյն տեսիւքէն առնլով. «Ոիւն գործեաց լոյսն շողացեալ, ասէ Վգաթանգեղոս ի թուղթն Յ1., և ծագեաց ի մէջ ներքին սեանցն խարսխաց,՝ ինչպէս հին Տօնացոյցն՝ ուր դնի, «Տօն է շողակաթին ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի, . և Ասողիկ. «Զարկական նշանն որ ի վերայ սրբոյ Ծողակաթի գմբեթին կանգնեալ էր, ճառապանօք ի վայր բերէր (Վրհաճ Վմբայն) ի Յ1. Յ թուին, :

Մայր Եկեղեցւոյ այսքան անուանակոչութենէն՝ մեք մեր այս Ատորագրութեան մէջ առաջին անունն ի գործ դնելով կնքեալ ի հրեշտակէն, այն է Կաթուղիկէ Եկեղեցի, նորա տեղը կը գտնեմք Վաղարշապատապատայ քաղաքամիջին «մօտ յաղարանս արքունի, ըստ Լուսաւորչին տեսլեան. «Եւ տեսանեմ ի մէջ քաղաքիս մօտ յաղարանս արքունի խարսխաձե Շախարակաձե խարիսխ ոսկի . . . և տեղին այն, ասէ, լիժի տաճար Աստուծոյ և տուն աղօթից ինդրուածոց ամենայն հաւատացելոց, և Ամոռ Քահանայապետութեան, : (Վգաթ. թղթ. Յ1. Գ.):

Եյս տեղ, ուր բախեաց մարդն ահաւոր ոսկի ուռամբ ըլլթանձութիւն լայնատարած գեանոյն, և ուր հրեշտակն ասաց

սրբոյն Գրիգորի, «Ե խնեսջեր զտաձար անուանն Աստուծոյ ի տեղոջն՝ ուր քեզ ցուցաւ, (ի թղթն. Յ1. Ա), սուրբն Գրիգոր թագաւորի և ժողովրդոց հետ բարձր քաղաքորմով փակեալ զոտեղին ի պատիւ, և դռնով և դռնափակով ամրացնելով, կանգնեց անդ նշան Տէրունական Խաչին, զի ամենայն ոք գալով այն տեղ, ամենազօր Արարչին Աստուծոյ երկրպագելով ծունը կրկնեն. ուր և յետոյ սուրբն Գրիգոր Վեսարիա Եպիսկոպոս ձեռնազրուելէն ետքը շինեաց « զնկատեալ տեղի տանն Աստուծոյ զցուցեալն նմա ի տեսլեան, զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զի կեղեցին Աստուծոյ^(*)», սրբոյն Տրդատայ թագաւորութեանհնգետասահներորդ տարին, յամն Տեառն 301—303 և նորա մկրտութենէն ու սուրբ Աւետարանը ընդունելէն ետքը բոլոր բանակի և ժողովրդոց հետ։

Եւ ինչպէս յայտնի է, սուրբ Լուսաւորիչն Գրիգոր այս Եկեղեցւոյ մէջ յարևելս կանգնեց մի սեղան սրբազն խորհրդոյ և օծեց զայն սուրբ Աստուծածնի անուամբ, տօն կարգելով նմա Օգոստոս ամսոյ մէջ վերափոխման շաբաթ օրը, այս է որ մեր Եկեղեցւոյ հին Տօնացուցի մէջ, ինչպէս որ վերը դրինք, նախանքը դրել են «Ծարաթ աօն է Ծողակաթին տեսլեան սրբոյն Գրիգորի, . ուստի և յետագայ պատմագիրը մեր կը կոչեն «Ծողակաթ Աստուծածին, :

Ըստ այսմ այս Կաթուղիկէ Եկեղեցի եղաւ տեղի և Վթոռմած Քահանայապետութեան ձայոց և հոգեւոր իշխանութեան Գրիգոր Լուսաւորչին և անմիջապէս յաջորդաց մինչեւ ձայրապետական Վթոռոյ Դվին փոխադրուիլը, ըստ քաղաքական հանգամանաց աղղիս, ուր սուրբ Լուսաւորչին մինչեւ Մէլիտէ նստան տասներկու Կաթուղիկոսունք՝ Փրկչական Յ03

(*) Ըստ աղղային աւանդութեան աստ կանգնեց նոյ սեղան և մատոց Աստուծոյ իւր գոհութեան պատարազը. ուր յետոյ կտակաշտութեան ժամանակ կայլ Արտեմիս կուռքը յորմէ և կոչէր Արտիմէտ քաղաք ըստ Խորենացւոց։

թուականէն մինչև 453 ըստ որոյ և հաւասարի է թէ՝ և մենասատանն սուրբ Առևտորքէն սկսաւ. զոր ազդային պատմիչք Տուն Կաթուղիկոսարանի կ'անուաննեն:

Ուրացեալն Մեհրուժան երբ որ Վաղարշապատը կ'աւերէր իւր յարձակման ժամանակը յամին 380, աւերեց և Կաթուղիկէ Եկեղեցի քաղաքին՝ Աթոռն Հայրապետական. որոյ համար Աերէսու Եպիսկոպոս պատմիչ՝ սոյն Կաթուղիկէ Եկեղեցին Վահանայ նորոգութեան ժամանակին, որոշակի կ'զրէ և այս, թէ Պարսից զօրքը Մեհրուժանայ առաջնորդութեամբ աւերեցին և Կաթուղիկէ Եկեղեցին ըստ այսմ. “Եւս Վահան, ասէ, (Վամիկոնեան) ժողովեաց և զհարկս աշխարհիս Հայոց (զոր տային յարքունիս) և շինեաց զԵկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի, և ի Դմիտի և ի Մզրոյս :

Բայց ինչպէս կ'երեւի Դազար Փարպեցւոյ թղթէն առ Վահան տէլն Վամիկոնէից՝ զոր յառաջ պիտի բերեմք յետոյ, Վահանայ նախնիքը նորոգած պիտի լինին Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ Պարսից Հայաստան յարձակուած ժամանակին Պապայ թագաւորելէն եաքը՝ Մեհրուժանայ աւերմունքէն գրեթէ հարիւր երեք տարի յետոյ, և Վահանայ նորոգութենէն յառաջ:

Փրկչական 452 թուին երբ որ Հայրապետական Աթոռն Վաղարշապատէն փոխադրուեց ի Դմիտրի Վելիտէ Կաթուղիկոսի Հայրապետութեան առաջին տարին, աստ ի Կաթուղիկէ Եկեղեցին կարգուեց միաբանութիւն հոգեսոր Ուխտի ի փառաբանութիւն Ենուանն Աստուծոյ. որոց հոգ և խնամք կը տանէին Հայրապետք ի Դմիտրի, ինչպէս կը յայտնէ Ատեփաննոս Օքէլեան ի դիմաց Կաթուղիկէի գրած ողբի մէջ: Բատ այսմ. “Բայց անտի (ի Դմիտրի) աստ (ի Վաղարշապատ) զիս խնամքին (Կաթուղիկոսունք):

Բաց ուրիշ պատմազիրներէ, Վաղար Փարպեցին իսկ կ'վշկայէ առ Վահան գրած թղթի մէջ՝ որ ամենիցն յառաջ է,

թէ Աթոռը Դմիտրուելէն եաքը՝ Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ կարգեցաւ “միաբանութիւն աղօթաւոր անձանց պարեգոտեորաց,, որոց զլաւոր կարգեց Վահան զնա ինքն Դազար. ուստի ոչ միայն Կաթուղիկէ Եկեղեցւոյ վերայ Հայրապետք խնամք ունեին, այլ և իշխանք նաև խարարազունք և սպարապետք յորոց Վահան Վամիկոնեան՝ որ Հայոց զօրավարն էր այս ժամանակին, Պարսից զօրացը յաղթելէն եաքը՝ նախարարաց բազմութեամբ եկաւ ի Վաղարշապատ յամի 483, ուր Կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ գուհութիւն մատուցանելով արած յաղթութեան համար, նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ “զհնացեալ զործ նախնեացն իւրոց,, զԿաթուղիկէ Եկեղեցին յերեսաց աւերանացն Մեհրուժանայ և հնութեան ժամանակին յամին 506, որպէս ասէ Դազար ի պատմութեան, 273, և շինեց մենաստան կրօնաւորաց համար. որոց և վերակացու կարգեց զն Վազար. որոյ համար զրէ և Ասողիկ, “Դակ Վահան (Վամիկոնեան) զԵկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով,, նոյն և ի ժամանակս իշխանութեան իւրոց՝ զմեծն Կաթուղիկէ Եկեղեցին որ ի Հայս, վերստին մեծապէս նորոգեաց, զդասս կրօնաւորաց բազմացուցանելով,, :

Եւս թէ և Վաղարայ վերակացութենէն յառաջ ի Կաթուղիկէ Եկեղեցին՝ կը խնամքին զայն իշխանք և նախարարք մեր և վերակացու ևս կարգած էին անդ Վահանայ նորոգութենէն ևս յառաջ, յայտնապէս կը տեսնուի Վաղարայ թղթի մէջը առ Վահան. որ երբ վերակացութենէն հանուեց, այսպէս բողք կը զրէ նրան. “Եւ կամւ ևս խորհիցիս զյիշելդ արւել պատգամն երանելոյն Յովհաննու՝ Գիւտայ Կաթուղիկոսի եղբօր որդւոյն քեզ Տեառն ի Ոիւկոյ դրախտին. յօմանց արանց իւր խոստանալով քեզ տեառն կարասի խնդրէին զտեղիդ (Կաթուղիկէ Եկեղեցին) . . . և ընդ Տեառն Յովհաննայ զայրացար թէ բնաւ իրեւ քեզ առն ոչ լսել . . . և ես վասն զի

տկարամիտ և անզգուշացող այր եմ յերկրաւոր միաս, ոչ ըդ-
քայի առ ժամանյն դաւոյն, այլ պարտ էր փութով և երագ ե-
րագ անկանիլ ի յոտադ տրասսուօք և ազաշելով ի բաց
փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյն,,,: (Տ թուղթն առ
Վահան Տէլն Մամիկոնէից, տիպ Մասկուայի):

Սորանից յայտնի է թէ յառաջ ևս Կաթուղիկէ Եկեղեցում
կային կրօնաւորք, որոց վերակացու էր Պաղարէն յառաջ՝ Ե-
րանելի ասացեալն Յովհանն, և այնքան նախանձելի էր միաբա-
նից բարդաւածեալ վեճակը, մինչև շատերը կ'զշորէին Պաղա-
բայ վերակացութեանը, և կջանային նորա ձեռքիցը յափշտա-
կել զայն իրք խոստանալով Վահանայ Պաղարը արտաքսելու
համար, սորանով կարող եմք ապացուցանել թէ Հայրապե-
տական Ծթոռը ի Դվին փոխադրուելն ետքը, Պաղարշապա-
տայ Եկեղեցում կայր Ուստ միաբանութեան վերատեսու-
թեամբ զլեաւորաց՝ մանաւանդ թէ Հայրապետաց, որոնք կը-
յիշուին Պաղարու թղթի մջը՝ մինչև նա ինքն Պաղար՝ որ
Վահանայ հրամանաւ կարգուեցաւ վերակացու:

Պաղարու այս թղթի յառաջաբանէն դիտեմք, ո՞ր Վաղար-
շապատայ Կաթուղիկէ Եկեղեցին փայտաշէն էր Պաղարու
վերակացութեան օրով, որոյ ժամանակ փայտակերտ Եկեղե-
հրով մնասուելով “ի վայրաբար մարդկանէ,,՝ ինչպէս կը վըկայէ
թուղթը, այս պատճառաւ գնաց Պաղար ի կողմանս Յունաց
յԱմիթ քաղաք (Տիարպէքիր), ուր աեսնելով որ չարանախանձ
մարդիկ սուտ բաներ կը շատացնեն Կաթուղիկէ Եկեղեցւոյ և
իւր ուսման համար, զրեց այն տեղից յիշեալ թուղթը առ
Վահան:

Եւս մասին յառաջաբանի զրուածը *), “Կամեցիալ մեծի
իմաստութեանն Վահանայ Մարզպանի Զօրավարին Հայոց
տեառն Մամիկոնէից զնա (զՊաղար) իւր առաւել մերձաւոր

(*) Վաղարաց թղթի յառաջաբանութիւնը իւր հեղինակութիւնը չէ
այլ ուրիշ իրեն ժամանակակից մարդու ինչպէս կերպէ:

և սիրելի առնել, շնորհէր նմա զհոյակապ և զականաւոր տե-
ղին ի Եոր քաղաքի, որում անուն էր սուրբ Կաթուղիկէ Ե-
կեղեցի վանօքն. և նորա ընկալեալ դբանն Մարզպանին, խո-
մածէր զաեղին. պատահեաց նմա կրել տրամութիւն ի վայրա-
բար մարդկանէ. զի ի հրոյ վնասեալ փայտակերտ Եկեղե-
ցւոյն . . . (աստ պահանի մի թուղթ, որպէս զնի յօրինա-
կին.) յայսմանէ կամ եղել նմա գնալ ի կողմանս Յունաց. հա-
սանէր յԱմիթ քաղաք. և անդ առ ժամանակ մի զտեղե առ-
նոյր,, (եր. 37):

Յամին 618, Կոմիտաս Կաթուղիկոս, ո՞ր սուրբ Հռիփսիմէի
վանքը շնից, Յովհաննիկ անուն երիցու վանահայրութեան
ժամանակին՝ Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ փայ-
տաշէն ծածկը վերցրուց, որ Մամիկոնեան Վահանայ ժամա-
նակէն շնիուած էր, շնից զայն հոյակապ Կաթուղիկէիւ և
կոփածոյ քարով. նորոգեցնոյնպէս և բոլոր խախտուած որմերը.
որոյ համար կը գրէ Ակրեսս պատմիչ. “վերացց (Կոմիտաս)
և զիայտայարկս սրբոյ Կաթուղիկէին, նորոգեաց և զեախտուած
որմացն. շնիեաց զբարայարկսն. այս եղել յամն Յովհաննկան
վանաց երիցու սրբոյ Կաթուղիկէին,,,: :

Կոմիտասայ շնութենէն իրը 20 տարի ետքը նորոգութիւն
արար ի Կաթուղիկէն Վաղարշապատայ և Եկեղես Գ. Շ-
նող կոչեցեալ Կաթուղիկոսն. և այս ինչպէս կ'երկի, որ ժա-
մանակ շնից նա սուրբ Գրիգոր անուամբ Եկեղեցին զարմա-
ցուցին տեսողաց ասացեալ յԱռապալին Վաղարշապատայ
ինչպէս որ Ճաղովոց պատմութիւնը կ'վկայէ, “Յարդարեալ
շնէ սա զսուրբ Շողակաթն ի Եոր քաղաքի,, այն է Վա-
ղարշապատ. որոյ Կաթուղիկէն կ'անուանէր և Շողակաթ Վա-
տուածածին, ինչպէս վերը զրեցինք :

Դվին քաղաքի բնաւոր Ըալհաճ ամիրայն՝ ըստ վկայու-
թեան Եսողկաց՝ զոր վերը դրինք, որ Հոռոմոսին վանքը (Վա-
ղավանք) այրեց, Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ՝
խաչն ևս խորտակեց Ճոպանօք վայր բերելով յամին 982:

Քանի որ Կաթուղիկոսական Եթոռը Դավին էր և Կաթուղիկոսք մերձ էին Վաղարշապատայ, խնամք ունեին այսպէս Կաթուղիկէ Եկեղեցւոյ վրայ. իսկ երբ որ Կաթուղիկոսական Եթոռը Շիրակ փոխադրութեցաւ Բագրատունեաց ժամանակը, գրեթէ անինամ մնաց Կաթուղիկոսաց ձեռնտուութենէն և կմնար ի խնամն վանահարց, և արեւելեան Եպիսկոպոսաց Եզդիս՝ Ոչուրինեանց օրովը:

Եպա 1441, Փրկչական թուին երբոր Կաթուղիկոսական Եթոռը վերստին հաստատուեց ի Վաղարշապատ, և Կաթուղիկոսական Սիրապեցին, սկսաւ սա նորոգել զԼաթուղիկէ Եկեղեցին և Հայրապետանոցը: Առան յաջորդելով Կարապետ Կաթուղիկոս 1443. թուին թէ և արաւ և սա նորոգութիւն, բայց մահը վրայ հասնելով՝ երկու տարիէն ետքը, նստաւ Կաթուղիկոս Գրիգոր Մակուեցի 1445/ն, որ աւարտեց Աիրակոսի սկսած շինութիւնները ի Կաթուղիկէն Վաղարշապատայ: Սա առաջիննեղաւ որ Հայրապետական Եթոռը Վաղարշապատ փոխադրուելէն ետքը՝ գիւղ և կալուածներ առաւ աթոռոյ համար. զորոնք մի առ մի կնշանակեմք ծանոթութեան մէջ, ինչպէս որ դրուած են ֆամբռ անուանեալ Եթոռոյ յիշատակարան գրոց մէջ^(*)):

Եյս ժամանակէն սկսաւ այլազգեաց բոնակալութիւնը Կաթուղիկոսաց վերայ. որոնք շարունակ չկարողանալով նստել յլշմիածին, իւրեանց տեղը փոխանորդ դնելով Եթոռոյն,

(*) Աղաւատուն վեց դանկ մուլք.

Աշարակ զիւղ վեց դանկ մուլք.

Բաթոնին (Բագայառիձ) վեց դանկ մուլք.

(Եյս զիւղը ամարանոց էր Կաթուղիկոսաց):

Մողնի զիւղ վեց դանկ մուլք.

Վաղարշապատ զիւղ վեց դանկ մուլք.

Քիրաշլու զիւղ (ի նիդ) վեց դանկ մուլք.

Եյս վեց զիւղը կ'զնէ Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսը:

Երենք աստանդական կ'շրջէին մինչեւ Ապրմաստեցի Ատեփաննոս Կաթուղիկոսը 1541 թիւն: Սա թէ և մեծ փոյթ ունէր Եթոռը ծաղկիցնել, բայց երկրի խոսվութեանց երեսէն ոչինչ չկարաց առնել. ուստի և իրեն Տեղապահ դնելով յլշմիածին Ահրաստացի Մէքայէլ վարդապետը, երբեմն թափառական կ'շրջէին, երբեմն յլշմիածին կ'նստէին մինչեւ Մէլքիսէթ Կաթուղիկոսը ցամ Տեառն 1593:

Եյս ժամանակէն սկսեալ Կաթուղիկոսները ընկան պարտատէրների ու հարկապահանջների բոնութեան տակ, և երկիրը ոտնակոխ եղաւ Պարսից և Տաճկաց պատերազմներէն վասն որոյ և մինչեւ Ոիւնեցի Առվսէս Կաթուղիկոսը Հայրապետական Եթոռը ի Վաղարշապատ գրեթէ՝ աւերապէր և առ 1620 թիւն:

Եռաջին Հայապաղ յլերեանայ երկիրը արշաւելու ժամանակ, որ Օսմանցւոց ձեռքն էր 1604 թուին, Վաղարշապատայ Կաթուղիկէն բոլորովին ամայի էր. և ինչպէս թափուր էր տաճարն ի Միաբանութենէ, նոյնպէս և Վաղարշապատ ի բնակչաց. որովհետեւ Երարատեան աշխարհի ժողովուրդը տարագիր եղած էր, երկիրը ևս ասպատակութեան մէջ՝ Պարսից Օսմանցւոց հետ պատերազմելու ժամանակին գրեթէ մինչեւ քսան և հինգ տարի 1604—1629, և Հայրապետական Եթոռն յլշմիածին ինչպէս տացինք, իսպառ ամայի էր և անբնակ:

Եռաքել ժամանակակից պատմիչ իւր պատմագրութեան ԻԴ. ԴԼ. Էր. 299. Վաղարշապատայ Կաթուղիկէի համար կգրէ այսպէս. “Եւս ասացեալ բանք որ ի մէնջ, ցուցանեն ըզանեղին (զԿաթուղիկէ Եկեղեցին) անբնակ զոլ ի մարդկանէ. և ասեմ զիսկն, ոչ էր անբնակ ամենեին, այլ դու համարեա իբր անբնակ. վասն զի Կաթուղիկոսունքն անդ յլշմիածին ո՛չ ըլլուսկէին, այլ յլերեան քաղաքի ի Կաթուղիկէ Եկեղեցւոջն^(*)”),

(*) Անուն մից յլեկեղեցեաց քաղաքին, և այժմ ևս կոչե Կաթուղիկէ, մերձ ի Պողոս Պետրոս Եկեղեցի:

և կամ թէ ի շրջակայս նորա. բայց սեւազլուխք ոմանք սինչ լքորք և գռեհիկք որպէս զդիւղական հողագործու, որք վարնորդիւք մշակօք բնակէին Աշխմիածին, և զաւուըս տարւոյն զբաւ զումն ի գիւղօրայսն անցուցանէին քան թէ Աշխմիածին,,,: :

“ Եպա Ո՞վսէս վարդապետն, ասէ, եկեալ ի Գահրատայ, առեալ ի Շահապահազայ Ըստանոյ զլուսարարութիւն սրբոյ Աշխմիածնի, մեծապատիւ փառօք և անպատում ցնձութեամբ... եկեալ եհաս յԱրեան քաղաք՝ որ և ի սուրբ Աշխմիածին, և առանց յապազելց ձեռն ի գործ էարկ նորոգութեան սրբոյ Վթոռոյն ի թուականիս մերում Ուծ.Օ., (յամի 1627). Ի վարդավառի պահոց երկու շաբաթի առուրն, որպէս ասէ մարդարէն, արարին զՄրուսաղէմ որպէս հիւզս միզապահոց... ըստ այսմ էր և Վթոռն Աշխմիածին. զի ամենեիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպտեալ ի զարդուց. ոչ գիրք, զի ո՛չ էր անդ ժամասացութիւն, և կամ ընթերցումն. ո՛չ ըզգեստ և ո՛չ շուրջառ. զի ո՛չ էր ժամակարգութիւն և պատարագ. մինչ զի Քրիստոսի իջման տեղին և սուրբ սեղանն ո՛չ ունէին ծածկոցս. ո՛չ կանթեղք, զի ոչ դոյր լոյս, այլ հանապազ ի խաւարի. բայց այլազգի մահմէտական ոմն վառէր ըզգձրագ ձիթոյ և գնէր ի վերայ բեմին վասն անցաւորաց ճանապարհորդագ, զի տեսանելով զայն, ողորմութիւն արաւոցեն նըմա. ո՛չ խնկութիւն, զի ո՛չ դոյր բուրփառ և խունի, և սալյատակ եկեղեցւոյն քանդքանդեալ եղեալ որջ զեռնոց և սողնոց. և մեծամեծ լուսամուտքն զորս ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի. ուստի մտեալ ի ներքս թռչունքն լընուին զեկեղեցին ծրտովք և ծղովք և այլ գուեխօք, զոր ամենայն օր հարկիւ սրբէաք, և ընդ այդն ի լուսանալն ձայնք թռչնոցն խափանէր զձայն ժամ տսելոյն,,,: ”

“ Խսկ արտաքուստ կուսէ զլուխ Կաթուղիկէին և տանիին առնայն և երեսք որմոցն քանդքանդեալք և շրջապատ աստիւ ճանաքաբքն փշրեալ և ծակուեալ, և ի վաղեմեայ ժամանակաց որ շուրջ զեկեղեցեաւն շնութիւն էր եղեալ և դարձեալ

աւերեալ և ի վերայ միմեանց վկուղեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամեն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն և հողն ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն որք կան արտաքուստ կողմանէ,,,: ”

“ Խսկ զարդք և սպասք և անօթք եկեղեցւոյն բնաւ ո՛չ դոյր. զի որ ինչ և լեալ էր ի հնոց ժամանակաց, Կաթուղիւ կոսունքն զամենայն վաճառելով և գրաւ գնելով, վատնեալ էին. և արդ ևս գրաւ եղեալ անօթքն կային առ մահմէտականս, զոր ազատեաց Ո՞վսէս վարդապետն,,,: ”

“ Եւ յորժամ Ո՞վսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին վասն հողոյն և մոխրոյն որ բլրացեալ կայր շուրջանակի, թէ զեարդ լինի պեղել. բայց որովհետեւ կամքն Սատուածային քաղցրացեալ էր և ձեռնարկութիւնն նորին հաճութեամբն էր, զիւրահնար եղեւ բարձումն հողոյն. վասն զի ածէին զջուր ի գետոյն յորդ և վարար, և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և ժակէբըն փորէին զհողն և տային ջրոյն. որով ջուրն զհողն տանէր, և քարն մնայր. և ի սակաւ աւուրըս բարձաւ հողն և բացաւ վայրն ամենայն, և մնացեալ քարինքն շարեցան ի յորմն տանցն, և ապա լայն և ընդարձակ պարսպան շուրջանակի յօրինեալ զբրդունս ութն ի նմա,,,: ”

Ո՞վսէս Աիւնեցի առաջնոյն Շահապահազայ սիրելի լինելով, նրանից հրովարտակ առնելով լիակատար իշխանութեամբ եկաւ ի սուրբ Աշխմիածին, և որովհետեւ ստ առաջին նորոգողն եղաւ. Կաթուղիկէին և Հայրապետական Վթոռոյ զբեթէ՛ երկու հարիւր տարի ամայութենէն յետքը 1445—1627, և յետ նորա ընդհանուր Կաթուղիկոսք Ազգիս շարունակ յաջորդութեամբ և անմիջապէս նստան ի սուրբ Աշխմիածին, ու պէսպէս շնութեամբք բարեգարեցին զՄթուն սուրբ Աշխմիածին, մեք բոլոր նոցա նորոգութիւնքը և շնութիւնքը մի առ մի կղրենք մինչև ներկայ մեր Վեհափառ գէորգ Դ. ընդ-

Հանրական Կաթուղիկոս ամենայն ծայրոց. որոց արարքը ի սուրբ Կաթուղիկէն Վաղարշապատայ և ի ծայրապետական Եթոռն սուրբ Խջմիածին՝ կտեսնեն ընթերցողք ըստ կարգի:

Ինչպէս կերեխ վերը յիշուած Ըռաքեալ պատմագրի վկայութենէն, յորմէ կառնու և Սիմէն Կաթուղիկոս իւր ջամբռ մատենին մջ, Մովսէս Կաթուղիկոս առաջնն եղաւ որ Կաթուղիկէ Խկեղեցին աւերանքէ աղատելու փութով, Շահապաղէն Փակակալութեան Հրովարտակն առնելէն ետք յամին 1627, Կաթուղիկէ Խկեղեցւոյ չորս կողմը եղած աւերանաց հողակոյտը ջրին տալով, ընդարձակ քառակուսի պարսպով պատեց զայն, արևմտեան կողմը կամարայարկ մեծամեծ դարպաներ կանգնեց. դէպ ի հիւսիս, և դէպ ի հարաւ՝ շնորհ Կաթուղիկոսարան. երկուքի միջոցը պարսպի արևմտեան կամարայարկ մեծ դուռն կոփածոյ քարով՝ յանուն Տրդատայ, որ ուղղակի կանկանի Տաճարի արևմտեան դրան հանդէպ:

Պարսպի հիւսիսային բաժնում շինել տուաւ ծայրէ ի ծայր միաբանից սենեակները իւրեանց կամարայարկ տալաններով մեծ մասամբ քարով և թրծած աղիւսով. իսկ արևելեան կողմը կէս մասը խցեր և հարաւային անկիւնը հացի փուռն և նորա պատկանեալ սենեակներ:

Հարաւային կողմը կանգնեց տնտեսատունը, ամառուայ և ձմեռուայ սեղանատաները, ամբարանոց ցորենոյ, գարու և այլ նիւթոց համար: — Եյս ամեն շինուածքը բաց ամառուայ սեղանատանէն՝ կոփածոյ քարով և թրծած աղիւսով էին:

Կաթուղիկէ Խկեղեցին զրեթէ ի հիմանէ նոր ի նորոյ նորոգեց՝ գմբէթը, տանիքը, առաստաղը, որմունքը ներքուստ և արտաքուստ նորոգեց, որոնք քանդուել ու քարերը թափել էին. և տաճարի միջի սալայտակը բոլորը ևս կոփածոյ քարով շինեց. որովհետեւ այս ամենքը իսպառ աւերուած էին՝ ինչպէս պատմին կվկայէ: Եւ այսպէս Սուրբ Եթոռն Խջմիածին պայծառացնելով, վերսակն Միաբանութիւնը ժողովեց, որոնք

Խկեղեցւոյ և մենաստանի աւերանաց պատճառաւ ցրուած էին ի գիւղս և յաւանս⁽¹⁾):

Հաստատեց և գորմէ յառաջացան բազում շնորհալի Վարդապետք ըստ վկայութեան Սիմէն Կաթուղիկոսի, և այս՝ ինչպէս կերեխ, ի Յովհաննավանք, ուստից Փիլիպպոս Կաթողիկոսը իւր օրով փոխադրեց աստ ի Սուրբ Խջմիածին:

Մովսէս Կաթուղիկոսի այս ամեն շինութեանց ծախուցը՝ ձեռնտու էին մեր Աղջի երեւելի և կարող անձինք իրենց յօժմարակամ տրօքն և միջնորդութեամբ հոգեորականաց, որոց շատը նորա իսկ աշակերտներից էին, որոց առաջնը Փիլիպպոսն էր՝ որ իւր վախճանին՝ իրեն յաջորդ կարգեց Մովսէս:

Եւ այս եղաւ երկրորդ նորոգութիւն Կաթուղիկէ Խկեղեցւոյն և մենաստանին ու միաբանից հաստատութեան. յորմէ մինչեւ ցայսօր անընդհատ կշարունակի⁽²⁾):

Փիլիպպոս Կաթուղիկոս երբ նստաւ յԵթոռ յամին 1633, Մովսիսի վախճանէն ետքը, Եթոռոյ մջ որքան փայտէ շինուածք կային և աւերուած Պարսից և Օսմանցւոց պատերազմաց երեսէն՝ ևս և յերկրաշարժութենէ, բոլորը վերստին նորոգեց. Խկեղեցւոյ տանիքը բաց ի գմբէթէն՝ բովանդակ նորոգեց սրբատաշ քարով: Երևելեան կողմի սենեակները շինեց կամարակապ քարով և աղիւսով. որոց վերայ կանգնեց իւր Կաթուղիկոսարանը վայելուչ շինքով՝ ամառուայ սեղանատունը զոր Մովսէս փայտով էր ծածկել, սա սրբատաշ քարով շինեց. Խկեղեցւոյ շրջապատը սալայտակ արաւ, նոյնպէս և

(1) Վաղարշապատ գիւղը՝ զոր Գրիգոր Կթ. Մակուեցին գնել էր և տիրապետել էին Պարսիկք, սա քաղաքական դատարանով յետ առաւ, և Աթոռոց սեպհականեց.

(2) Մովսէս Կաթուղիկոսէն սկսած մինչեւ Սիմէն Կաթուղիկոսի վախճանը՝ Կաթուղիկոսաց արած շինութիւնքը ի սուրբ Կաթուղիկէն՝ Զամբըն մատենէն կքաղնեք:

Միաբանից սենեկաց յառաջը ծայրէ ծայր չորս կանգում լայ-
նութեամբ. Աթոռոյ դպրատունը որ Յովհաննավանքն էր՝ այս
միջոցիս Փիլիպպոս փոխադրեց զայն ի սուրբ Խջմիածին և յԱ-
թոռումս հաստատեց: Պարսպի հարաւային կողմը շինեց ձիւ-
թահանքը մեծ ծախսով Աթոռոյ և գիւղացւոց համար, ուր
մերձակայ գիւղերէն կտաւատ կրերէին ձեթ հանելու յօգուտ
Աթոռոյս:

Երկեղեցին ևս խոնաւութենէ աղատ պահելու համար, ուս-
աի կվասուէր միշտ, պարսպի հարաւային դռան յառաջին ըս-
կսած իներքուստ մինչև Գայիանէի վանքի հարաւային կողմը
գէպ ի հանդամէջս, Քանիքան փորել տուաւ ընդ երկրաւ, և ի
տեղիս տեղիս հորեր բանալ տուաւ, ընդ որ եկեղեցւոյ տակէն,
ժողովուած ջուրը կելանէ գէպ ի հանդ, և կկոչուի (ստոր-
ուանիան), որ ինչպես կը Ամեն Կաթողիկոս, երկու օգուտ
տուաւ, մէկ որ բաւական ջուր կելանէ յանդաստանս, մէկ ևս՝
տաճարի միջին գիճութիւնը բաւականին պակսեց¹⁾:

Եյս միջոցիս որ ազգային գործով գնացել էր Փիլիպպոս
Կաթողիկոս ի Կոստանդնուպոլիս, 1653, վերադառնալով
յԱթոռս, Երկեղեցւոյ մեծ դանդակահատունը սկսաւ շինել արեւ-
մտեան դռան վրայ կից Երկեղեցւոյն՝ գեղեցիկ քանդակործ
ծաղկանց և զանազան կենդանեաց փորուածով. որոց շին-
ուածքը հաղիւ թէ հասցրել էր մինչև յառաջին յարկի ներ-
քին կամարը, վախճանեցաւ 1655 թըուին²⁾:

(1) Աթոռոյս գիւղերի անդաստանաց համար ևս հոգ կալաւ մեծ աշ-
խատութեամբ. ուստի և միւս բարերարութեանց հետ մեծ ծախսով Ա-
րագած լեռան զինէն մինչև ութ ջրաղացի ջուր, որ գէպ ի հիւսիւս Շի-
րակ գաւառը կմագիր, շրջեց գէպ ի Քաստաղ գետն Օշականայ և արքու-
նի գատարանով գետի կէս ջուրը սեպհականեց Աթոռոյս:

(2) Վաղարշապատ գիւղը՝ որ վերստին յափշտակել էին Ամիրիկիւնէ
նախարարի ժառանգները Բ. Շահսպաղպի հրովարտակով յետ կաւուռ
Փիլիպպոս ի սեպհականութիւն Աթոռոյս: Օշական գիւղի հինգ գանկ
մուլքն կգնէ Փիլիպպոս Կաթողիկոս:

Յակոր Կաթուղիկոս Յուղայեցի յաջորդ Փիլիպպոս՝ ար-
ժանայիշատակ վարդապետին՝ արժանի աշակերտ, նորանից
ետքը՝ նորա սկսած զանդակատունը շինեց եռայարկ և աւար-
տեց ծաղկենկար փորուածներով, կարմրագոյն տաշածու քա-
րով, մեծ աշխատանք կը ելով ծախուց կողմէն՝ և հակառա-
կութիւն և արգելք երկրի բռնաւոր իշխողէն այն դառն ժա-
մանակին. բայց վերջապէս ամեն նեղութեանց համբերութեամբ
յաղթելով, վայելուչ կաթուղիկէիւ կաւարտէ շինութիւնը
յամի 1658. որոյ արձանադրութիւնը դրուած է Կաթու-
ղիկէի ներքին կողմը շուրջանակի:

Կաթուղիկոսական տունը վայելչացնող Կաթուղիկոսներից
մէին էլ Յուղայեցի Յակոր Կաթուղիկոսն եղաւ. և ամենից
զբեթէ գերազանցեց Աթոռը հարաւացնելով գիւղերով ու
կալուածներով. զորոնք դրամով գնեց և սեպհական մուլք
հասաւաեց Աթոռոյս այնիքան շինութեանց ծախուց հետ, ինչ-
պէս կտևսնուի ծանօթութեան մէջ³⁾:

Աթոռոյ Միաբանք և Վաղարշապատայ բնակիչք՝ որոնք
ցայն վայր մեծ նեղութիւն կը կրէին մաքուր ջրոց պակա-
սութենէն ամառ ժամանակ, և ձմեռը ցրտի սաստկութենէն,

(3) Գիւղօրայք՝ զորոնք գնել է Զուղայեցի Յակոր Կաթուղիկոս ի սեպ-
հականութիւն Աթոռոյս՝ ըստ զրելց Սիմէն Կաթուղիկոսին, սոքա են:

Ամիրի զիւղ որոյ չորս և կէս գանկ մուլքն գնէ Յակոր Կաթուղիկոս:
Ի Գեղալքունիս:

Եայծի զիւղ ի Ծաղկունիս. վեց դանկ մուլքն գնէ Յակոր Կաթուղիկոս:
Բոխնիս հանդէպ Անբերդու. գիւղացիք լնծայեն Աթոռոյս յորդորանք
Յակոր Կաթուղիկոսի:

Նարալցունլու զիւղ ի լանջս Արագածու. որոյ վեց դանկ մուլքն գնէ
Յակոր Կաթ. իւր վարդապետութեան ժամանակին:

Մելքի զիւղ յԱպարան. վեց դանկ մուլքն գնէ Յակոր Կաթուղիկոս:
Նորագիւղ յԵրեւան. վեց դանկ մուլքն գնէ Յակոր Կաթուղիկոս:

Օշական զիւղ յոտն Արագածու. մի դանկ մուլքն գնէ Յակոր Կա-
թուղիկոս. որոյ հինգ դանկն գնել էր Փիլիպպոս:

երբոր առուները բոլոր կսառին, Յակոբ Կաթուղիկոս Աթու-
ռոյս այժմեան եղած քանքանը շինել տուաւ. զիւղի արևմտեան
հիւսիսի կողմէն մինչև Քասաղ գեար զրեթէ կէս ժամ հե-
ռաւորութեամբ. և իրարու մերձ հոլեր բանալով ականահա-
տութեամբ, ջրերը աստի և անտի ժողովեց մի տեղ, և ընդեր-
կրեայ ձանապարհով բերաւ Աթոռս. որոյ մի մասն ջուր ա-
րեմտեան կողմէն կմանի ներսի պարիսպը յարըումն միաբանից,
և կէս մասն մտնելով ի Ահհարան և ի Պատարապատն, կան-
ցանէ դէպի մեծ լճակն, որով թէ ամառ և թէ ձմեռ ժամանակ
մաքուր և սառն ջուր կըմպէին միաբանք և զիւղացիք մինչև
այս տարիներս. բայց բաւական տարիներէ հետէ զիւղօրայք և
բնակիչք շատանալով և գետը զանազան առուներ բաժա-
նուելով արքունական զիւղերու բնակչոց համար, ամառ ժա-
մանակ քանքանը բոլորովին կցամաքի. թող որ Աթոռոյս
կտուավարչաց շահասիրութենէն և թուլութենէն, նախ քան
զայս Վաղարշապատու բնակիչք բնակութիւններ շինելով
քանքանի վրայ, բոլորովին զրեթէ խանգարել են ձանապարհը,
և ապաստան կմնամք ամառը՝ պղտոր ջրելին:

Յակոբէն ետքը երբ որ նստաւ Խղիազար Կաթուղիկոս,
յամին 1682, Աթոռոյ պարտքերը տալէն ետքը, տաճարի մէջ
Խջման Տեղւոյ վրայ կանգնեց Կաթուղիկէ հասարակ քարից
չորս սիւնով, և հաստատեց սեղան Պատարագի, որ յառա-
ջագոյն քարորմով պատած էր, ուր և Այլն ահաւոր,, երե-
ցած. իսկ տաճարի հիւսիւսային և հարաւային թեւերը՝ որոնք
կիսաբոլորակ խորաններ էին, հիւսիւսայինը բարձրացըեց տա-
ճարի յատակէն եօթն աստիճան և կանգնեց սեղան դէպ արե-
ւելք, անուամբ սրբոյն Ստեփաննոսի. և հարաւայինը երեք
աստիճանով սրբոյն Յովհաննու Մկրտչի անու ամբ. որոց մէջ
կիատարուին Եպիսկոպոսի ձեռնադրութեան հանդէսը: Այս
պատճառաւ ևս Խջման Տեղի յառաջէն հաստատուն քարով
հիւսիսից հարաւ կտրեց, որ խաժամուժ ժողովուրդը յառաջ
չէ դայ, ուրեւ հասարակ օրերը միշտ ժամերդութիւնը կը կտատրի:

Ծինեց և երեք զանգակատուն փոքրիկ Կաթուղիկէիւ ի
տանիս տաճարին՝ մինյարեելս Աստուածածնի սեղանոյ վրայ,
երկուքը ևս հիւսիւս և հարաւ Ա. Ստեփաննոսի և Ա. Յովհ-
հաննու նորահաստատ սեղանների դուխը:

Աղեսանդր Կաթուղիկոս Զուղայեցին ձմեռուայ սեղա-
նատունը վերստին շինեց կամարայարկ կոփածոյ քարով և
ծածկեց թրծած աղիւսով, որ հնացեալ էր, որ և մինչև ցայ-
ժը հաստատուն կայ իւր յիշատակարանով:

Եղիազարու հասարակ քարով շինածը ի վերայ Խջման
Տեղւոյն, Համատանցի Աստուածատուր Կաթուղիկոսը փո-
խեց, և նոր ի նորոյ կառոյց վայելչաձեւ մարմարոնեայ գեղեցիկ
Կաթուղիկէիւ չորս սեան վրայ. նոյնպէս աւագ Աեղանոյ բեմի
Ճակատը ծայրէ ի ծայր մարմարոնեայ քարով շինելով, խորա-
նաձեւ զարդարեց. ոսկովու գոյնզգոյն նկարներով Խջման
տեղւոյ Կաթուղիկէն և աւագ սեղանոյ բեմը իմիասին ծաղ-
կազարդեց:

Այս նորոգեց և տաճարի սալայատակը, մեծ Կաթուղիկէի
չորս մեծ սիւները. սպիտակացրուց բոլոր տաճարի մէջը, և առ
հասարակ ոսկեզօծ գոյնզգոյն գեղերով ծաղկել տուաւ. որոց
արձանագրութիւնը Կաթուղիկէին ներսի շրջանակումը գրուած
է յամին 1720, շրջապատ լուսամտաց ներքեւ:

Եւագ սեղանոյ մարմարոնեայ բեմի Ճակատը, որ խորանաձեւ
հատուած հատուած բաժանուած է, Կարապետ Կաթուղի-
կոսը երկուտասան առաքելոց պատկերները նկարել տուաւ. մէջ
տեղը Աստուածամայր՝ Յիսուս ի գրին. երկուծայրը՝ Ատե-
փաննոս և Փիլիպպոս սարկաւագունք, և շրջանակները ոս-
կեզօծ ծաղկազարդեց առաջուայ նման:

Աբրահամ Կաթուղիկոս Ոշեցի պղնձեայ թափուածոյ
վանդակով շրջապատեց Խջման սեղւոյ սեղանը մէջ առնով
չորս մարմարոնեայ սիւները ի թւին 1732:

Այս ինըն Աբրահամ կանգնեց աւագ խորանի կողմնական
սեղանները, հիւսիսայինը անուամբ Ա. Յակոբայ առաքելոյն, և

Հարաւայինը Ո. Լուսաւորչի, կամարակապ դրուադեալ փայտով, որոց փոքրիկ բեմերի ճակատը զարդարեց ծաղկենկառով և մարգարեական պատկերներով։ ‘Նկարել տուաւ նոյնապէս Տաճարի որմոց և սիւների վերայ եղած պատկերները ևս մեծագումար ծախսով։’

Փոնատունը ևս շինեց սրբատաշ քարով նորա այլ ամեն հարկաւոր շինութեանց հետ։

Պաղար Կաթուղիկոսը՝ որնստաւ յամին 1738, տեսնելով որ Փիլիպպոս Կաթուղիկոսի շինած Կաթուղիկոսարանը հընացել է բոլորովին, մանաւանդ որ Եկեղեցւոյ արեւելեան կողմը լինելով՝ անյարմար է բնակութեան, արեւմտեան կողմը՝ շինեց նոր Կաթուղիկոսարան երկյարկեան պարսպի դրան ներքին կողմը դէպ ի հարաւ. որոյ մեծ դուռը կանգնեց ամառուայ սեղանատան արեւմտեան դրան հանդէպ. ընդ որ հանդիսաւոր օրերը Կաթուղիկոսք կիջնէին ի սեղանատուն. այս դրան ձանապարհը Կաթուղիկոսարանի ներքնայարկ սենեակների մէջէն լինելով, յետագայ Կաթուղիկոսք փակեցին զայն. և նոյն սենեակները կէս մի արարին գանձատուն և կէս մի մառան Կաթուղիկոսարանի։ — Կաթուղիկոսարանի շինութեան արձանագիրը դրուած է այս դրան վերայ յամին 1741։

Եյս իւր շինած Կաթուղիկոսարանի հիւսիսային կողմում զարդարեց Պաղար Կաթուղիկոս և գետնանիստ շինուածք Կաթուղիկոսաց ձմերնային բնակութեան համար, որոնք յետոյ Արմէօն Կաթուղիկոս արար բնակարան և տպագրատուն, ինչ պէս կերեի նորա գործոց մէջ։

Հարաւային կողմը Առվլէս Կաթուղիկոսի շինած պարսպէն դուրս՝ շինեց Պաղար կրկնայարկ և քառակուսի հիւրանոց, որ իւր անուամբ Պաղարապատ կոչուեցաւ. սորա հարաւային կողմը պարսպեց կոփածոյ քարով և թրծած աղիւսով, և մէջ տեղը կանգնեց կամարակապ մեծ դուռն կոչ փածոյ քարով՝ հանդերձ շինութեան արձանագրով ի 1750 թուին։

Եյս ամեն շինուածքներէն եաքը թէ Կաթուղիկէ Եկեղեցւոյ պայծառութեան և թէ մենաստանի հարկաւորութեան և վայելչութեան համար, ինչ էլ որ պակաս էր մնացել ցայն վայր ու կհարկաւորէր, այն ամենն էլ արժանյիշատակ Արմէօն և Պուկաս Կաթուղիկոսները շինեցին՝ պատրաստեցին և զրբթէ լրացրին. որոց գործքերն էլ կարգաւ պիտի նշանակենք։

Երդարե կարծես թէ լրացրին սոքա Եկեղեցւոյ և Կաթուղիկոսական տան թերութիւնները, և այնքան շինութեանց մեծագումար ծախսերը հոգալէն ետքը այս երկու Կաթուղիկոսք աշխարհի այն անիշխան և վրդոված ժամանակին՝ բաւականին ևս մեծ գումար դրամոց թողին յետագայ Կաթուղիկոսաց ուտելու պաշար, որոնք դրամը վատնելէն ու տունը քարուքանդ անելէն ետքն անգամ՝ քար քարի վերայ էլ չի կարողացան կամ չի կամեցան գնել, որ գոնէ իրենց հոգւոյն յիշատակ լինէր, և իրենց անաքանդութեան արարքը աշխարհիս երեսին ծածկէր. ասսհիս ձըշմարտութիւնը կդանեն ընթերցողք Գաւաթի և Դանիէլի գործոց մէջ։ — Մէնք Արմէօնի և Պուկասու արարքը գրենք ի Ո. Կաթուղիկէն։

Առվլէս Կաթուղիկոսի շինած այս է Եկեղեցւոյ շրջապատ պարիսպը շատ անձնուկ էր, և միայն Արմաննից բնակարանը և տանը վերաբերեալ հարկաւոր շինուածքը կողարունակէր իւր մէջ, որք անհրաժեշտ հարկաւոր էին. իսկ այլ ամենայն կարեւոր շինութիւնք արտաքս էին պարսպին, ամբարը, անասնոց գոմը, մարազը, խոտանեղը և այլ այսպիսիք. ըստ որոյ և միշտ երկիւղի մէջ էին Արմաննիք, շատ անգամ Աթոռոյ և ուխտաւորաց ձիերը կտանեին գողք՝ որոց համար իսկ Արմէօն Կաթուղիկոս իւր Զամբու անուանեալ մատենի մէջ կզրէ⁽¹⁾, յորմէ կսիապուի մեծ պարիսպը շինել։

(1) Զամբու մատեանն՝ որ յիշատակարան է անցից Աթոռոյ և բաղը կալուածոց, տպագրուեցաւ յանցեալ 1873 ամին։

“ Առուրբ Աթոռն նախապէս, կգրէ, ի յարտաքուստ կուսէ
էր անպարխսպ, և գոմք և ամենայն անասնատունք և այլ
համբարք հարկաւոր արտաքին իրաց՝ էին հնացեալ, անվայելք
և անյարմարք, մանունք և գծուծք, և մանաւանդ ցան և ցիր,
երկիւզալիք և կասկածաւորք ի գողոց և յասպատակչաց. բա-
զում անգամ զձիս և զայլ անասունս հիւրոց և սրբոյ Աթո-
ռոյս իսկ տանէին դողք,,:

Երկրորդ՝ Վաղարշապատ գիւղը մենաստանի արեւմտեան
կողմէն պարապին կից լինելով, անմիջոց և խառն ի խուռան շէն-
քերովշրջափակեալ էր Աթոռը. ուստի և մեծ անվայելքութիւն
կբերէր նորան: Այս երկու պատճառէն ստիպեալ Արմէօն Կա-
թուղիկոս, մենաստանը շուրջանակի պարապեց քառակուսի ըն-
դարձակ հաստատուն պարսպով, ի ներքուստ հիմանց երեսէն
երեք կարդ սրբատաշ կոփածու քարով. մնացած շէնքը ամ-
բողջ կանգնեց աղեւսով, մեծամեծ բուրգերով, և դիտանո-
ցով. անասնոց գոմք, և այլ ներսի պարսպէն դուրս՝ շէնքերը
մէջ առնլով, նոր ի նորոյ շինեց արեւելեան կողմը միատեղ
հիւսիսային բաժնումք. և գիւղը քակելով, բոլոր բնակու-
թիւնը փոխագրեց հիւսիսային կողմը բաւական հեռի պարը-
պէն, և անելն ու եկեղեցին Աթոռոյ արդեամբքը շինեց, ինչ-
պէս յիշած եմք Վաղարշապատայ պատմութեան մէջ: — Պա-
րըսպի շինութեանց և գիւղի Երկեղեցւոյ արձանագիրք դը-
րուած են իւրաքանչիւրոց դոների վերայ՝ հանդերձ թուա-
կանով:

Երեք մեծ դուռն ունի պարիսպը կամարայարի կոփածոյ
քարով. որոց մեծ և փառաւորն է հիւսիսի կողմից, որ կհայի
դէպ ուղեղ գիւղի վերայ, մին արեւելեան հարաւ, որոյ վերայ
շինութեան արձանագիրը 1766 թուին. երրորդն յարեւմտից
Վաղարշապատի կցուլդք. չորրորդն՝ փոքր նոյնպէս արեւմտից՝
դուռն բաղանեաց, դոր և ինքն Արմէօն շինած է պարսպի ա-
րեւմտեան հարաւային անկիւնում:

Երկեղեցւոյ տանիքը ամբողջ սրբատաշ քարով նորոգեց. և
երկու խորանաց առաստաղները բանալով, վերնատուն շինեց
իբրև պահարան՝ յամին 1770:

Ամառուաց սեղանատունը սա վերստին շինեց կամարայարի և
բոլորովին սրբատաշ քարով, որ Փիլիպպոս Աթուղիկոսի շի-
նութենէն մինչեւ սորա ժամանակի հնացել էր, և մերձ էր
փլշելու: — Գաղրատունը ևս զօր Փիլիպպոս շինել էր պարսպի
ներսը նեղ և անձուկ և անյարմար ըստ աեղւոյն, որպէս և Վ-
թոռոյ մոմատունը, իսկ երկուքը ևս նորինորոյ շինեց առանձին՝
Միաբանից իցերի ետելը հին և նոր պարսպի միջոցը հիւսի-
սային արեւելեան անկիւնում:

Աթուղիկոսարանի կողմը շինեց երկյարկեան գարսպաս գե-
ղեցիկ, իբրև ամարանոց Աթուղիկոսի, և իրի միջնորմն
Վաղարշապատէն դէպ ի Վեհարանը տաճկաց և այլ հիւրոց
տեսութիւնը արգելելու, որոնք յաճախ կըպատահէին յԱթոռս:

Իսկ հիւսիսային կողմէն, ուր արդէն Վաղար Աթուղի-
կոս կանգնած էր ձմեռուայ բնակարան, վեց դագուչափ մէջ
առնլով քարվանսարայ ասացեալ շուկայի բաժնէն, յիշեալ
շինութեանց կից շինեց տանն սենեկակ նոցա լայնութեան և այլ
պիտոյից համար. որոց արեւմտեան կողմի սենեկակներում հաս-
տատեց Աթոռոյս տպարանը՝ ինչպէս յիշեցինք Վաղարու-
գործոց մէջ, իւր ամեն պաշտպայիւք, արձանագրելով դրան
ճակատի վերայ 1771. ուստի և հեռաւոր երկիրներէ մեծամեծ
ծախուք թուղթ չի բերելու համար, շինել տուաւ և թրդ-
թի գործարան Վաղարշապատի դրան հանդեպը պարսպէն դուրս
ի հարաւ. յորում յառաջն շինած թղթովը տպեց իւր
պարտավճար գիրքը յամին 1776:

Այս սենեկաց ետելէն հաստատուն որմավ պարսպից Տրդա-
տայ ասացեալ դռնէն մինչեւ նոր պարիսպը. որու արեւմտեան
բրդի վրայ շինեց ամարանոց և գիւտական դէպ ի դաշտը, շու-
կայի բոլոր խանութները նորոգելով, որոց մէջ վարձով կնը-
տին բնակիչք:

Եկեղեցւոյ շրջապատը խցերի յառաջ հորեր բանալ տուաւ ընդիրկրեայ ձանապարհաւ մէկ մէկի հաղորդելով Փիլիպպոս Կաթուղիկոսի բաց արած հորերի հետ՝ գիճութիւնը ցամաքեցնելու համար. որով Առաջ քանքանի ջուրը բաւական յաւելացաւ ընդիրկրեայ ջրերի միատեղ ժողովուելով, և Եկեղեցւոյ յատակը ու միաբանից սենեակները բաւականին ցամաքեցան խոնաւութենէ:

Ոիմէօն Կաթուղիկոսի այլ ամեն արարքը Եթոռապատկան զիւղերում, և հոգածութիւնքը նորա բոլոր կալուածքը սեպշականելու, գրած են աւանիկ առանձին առանձին զլխով իւր ֆամբռ մատենին մէջ. մենք Կաթուղիկէ Եկեղեցւոյ այս ստորագրութեան մէջ այն ամենը միայն գրեցինք, ինչ որ թողուց գործք և արարք Եկեղեցւոյ և մենաստանի մէջ. որոց թէ թութիւնք էլ մնացել էին, այն ևս լրացրուց Պուկաս Կաթուղիկոս: Եփսոն որ Ոիմէօն Կաթուղիկոսից ետքն եկող կաթուղիկոսք ինչպէս և Պուկաս՝ իւրեանց արարքը զըել չեն ֆամբռի մէջն ի յիշատակ, թէ և յիշատակի արժանի դործք չունեցան Պուկասի յաջորդները:

Պուկաս յաջորդելով Ոիմէօնին, իւր նախորդի բարի գործքէն ի բարի նախանձ շարժելով, Եկեղեցւոյ և Մենաստանի միւս հնացած տեղերն էլ ինքը նորոգեց. Տաճարի որմոց շըրշապատ չորս կարգ քարինքը ի ներքուստ աստիճանների վերէն փոխել տուաւ, որոնք ժամանակի հնութենէն մաշուած և ի տեղիս տեղիս աւելուած էին. որու շինութեան արձանագիրը դրուած է արտաքուստ Եւագ խորանի կիսաբողորակ որմոց մէջ յարեւելից, 1784 թուին:

Եկեղեցւոյ արտաքին շրջապատ սպայատակը շինել տուաւ երկրորդ տարին. որու յիշատակագիրը գրուած է Տաճարի աւելմտեան դրան հիւսիսակողմը 1785 թուին:

Տաճարի մէջը, որու նկարները անշքացել էին արդէն՝ սպիտակացնել տուաւ, և նոր ի նորոյ գեղեցիկ ոսկեզօծ նկարներով ծաղկեց, ու խորհրդաւոր պատիերներով զարդարեց,

որոյ որձանագիրը Կաթուղիկէի մէջ շրջապատ դրուած է Եստուածատուր Կաթուղիկոսի յիշատակարանի ներքեւ ի 1786 թուին. նոյնպէս ևս կաթուղիկէի կամարի տակը եղած հիւսիսային կողմի առաջին և յիտին դասու սիւները, որոնք խախտուած էին՝ նորոգել տուաւ և ոսկեզօծ ծաղկեց նկարիչ Յովնաթանի ձեռքով:

Եյս ամեն շինութեանց և նորոգութեանց հետո՝ մեծամեծ յիշատակներ ևս թողուց Պուկաս Կաթուղիկոս Մենաստանի մէջ, որոնք են.

Ներքին պարսպի արեւելեան հարաւային կողմը՝ ուր յառաջագոյն Առվակ Կաթուղիկոս փոնատան հարկաւորութեան համար համբարանոց էր շինել, նոր ամբար շինեց Պուկաս կրկնայարկ և կամարակապ կոփածոյ քարով, փոնատան անկեւնէն մինչեւ հարաւային մեծ դուռը ֆուղացի Խաչիկ իշխանի արդեամբք, 1785 թուականին:

Իսկ այս հարաւային դռնէն մինչեւ Կաթուղիկոսարանի շինուածոց հարաւային ծայրը, ուր Պապարապատիներքին դռւոն է, գրեթէ բովանդակ նորոգելով՝ շինեց ընդարձակ խոհանոց կամարայարկ. ուր որ յառաջ Ետուածատուր Կաթուղիկոս շինել էր տնտեսատունը. որու արձանագիրը նոյն որմին մէջ 1718 թուին. ամառուայ սեղանատունը նոր ի նորոյ յարդարեց երկու կարգ քարէ նստարանով, և ընդմէջ հին տնտեսատան և սեղանոյն շինեց կամարայարկ դռւոն հանդէպ Տաճարի հարաւային դրան. ընդ որ կմանեն տնտեսատունը, խոհանոցը ելն. և բոլոր այս շինութեանց վրայ կոփածոյ քարովէ, բարձր շինքով նոյն հարաւային երկայնութեան վրայ կցելով արեւելեան հարաւային մասնում շինած ամբարի հետ՝ շինեց երեք մեծ ամբար ևս. այս դրան ծակատն է շինութեան արձանագիրը 1788 թուին ֆուղացի Արգար աղայի արդեամբք:

Զմեռուայ սեղանատունը ևս ընդարձակելով, արեւելեան կողմն հինգ կամար յաւելցրուց առաջուայ շինուածքի վրայ ի 1790 Կեսարացի Յովհաննէս Ամիրայի ծախսով:

Այս վերնայարկ ամբարանոցի արևմտեան ծայրը, ուր երեք բաժին զմբեթատեղի էր մնացել թերի, Վառկաս Կաթուղիկոսի օրէն, յետ նորա հազիւ թէ Դաւիթ Կաթուղիկոս ի յիշաւ տակ իւր հոգւոյն շինեց այս երեք վերնայարկ սենեակները իւր խոռվայարոյց իշխանութեան միջոցին, երկուքը քարով կամարայարկ, և երրորդը ծածկեց փայտով, որով և Կաթուղիկոսարանի հարաւային ծայրը և ամբարի ծայրերը կցեց իրարու հետո. որոնք յետոյ Եփեմ Կաթուղիկոսը յարդարեց զըշատուն, որպէս ի ներքոյ:

Ամէօն Կաթուղիկոսի շինած Աթոռոյս դպրատունը երկու պարսպաց մէջն ի հիւսիսոյ, որ տեղւոյ գիճութեան պատճառաւ խախառած էր և լքեալ, և աշակերտք փոխադրուած էին Տրդատայ դբան վերնայարկ սենեակները, Եփեմ Կաթուղիկոս դպրատան այս նեղութիւնը տեսնելով, իւր իշխանութեան երրորդ տարին 1813, Ներսէս Կաթուղիկոսի վերահասութեամբ՝ շինել տուաւ Աթոռոյս այժմեան բազմասենեակ վարժարանը Եկեղեցւոյ արեւելեան կողմի շինութեանց վերայ Փիլիպպոսի շինած Կաթուղիկոսարանի տեղը, որոյ շինութեան համար Ներսէս Կաթուղիկոսի պատրաստած արձանագրերը իւր համառօտ գործոց հետ տպել տուած եմք ի Օմիւռնիա յամին 1844:

Եփեմ Կաթուղիկոսը ևս Եկեղեցւոյ տանիքը բոլոր նորու գել տուաւ. ուր Պարսից պահապան զօրքը Որուսաց հետ պատերազմի ժամանակ 1804 թուին ի տեղիս տեղիս կրակ վառ ուղով, այրուել ու փշքուել էին քարերը. ուստի և անձրել կմասեր կամարները և առաստաղը:

Աս այնպէս ժամանակ նստաւ Կաթուղիկոս, երբ Աթոռն Եջմիածին Դաւիթի և Վանիելի խոռվայութեանց երեսէն պարտքի տակ ընկած՝ միաբանք և երկրի ընակիչք թէ քաղաքական և թէ այս ներքին խոռվայութենէն ցիր ու ցան եղած՝ ժողովուրդն ի Արաւատան գաղթած, միաբանքը ի Տփիսիս տարագիր եղած կնստէին, երբ այս երկու գործոց յիշատակը թողուց առ

ռաքինի Հայրապետը, և 1821 թուին Երևանայ խանից երկիւղէն՝ փախաւ ի Վարաստան:

Յովհաննէս Կաթուղիկոսը նստաւ Եփեմի տեղ՝ Հայաստանի ազատութեան ժամանակ ի Պարսից լծոյն. և միայն Ամուղի սենեակները շինել տուաւ իւր իշխանութեան նոր ժամանակին՝ մեծամեծ լուսամուտներով և սիւնազարդ գաւթով՝ ներսի ասացեալ Պաղարապատի և Ամէօն Կաթուղիկոսի շինած ամառուայ վեհարանի տեղն ի հարաւոյ, որոց շինութիւնքն արդէն քայլայուած էին, որոց հիւսիսային սենեակների մէջ զետեղեց տպարանը մինչև 1837 թիւ, երբ այն տեղից ևս փոխադրուեց տպարանը հարաւային մեծ խոհանոցը՝ Ամիողայոս Կայսեր գալստեան ժամանակի: — Այս արարքը միայն թողուց Յովհաննէս Կաթուղիկոս. և յետ այսորիկ ոչինչ. վասն զի ժամանակն այնպէս էր փոխուել, որ էլ չէր նկատում գէպ ի իւր նախորդաց շինարարութիւնք:

Կայսերական կարգադրութեան համեմատ Եջմիածնայ Ամուղը բացուելէն ետքը, երբ որ առաջին Կաթուղիկոսը նըստաւ Ներսէս Հինգերորդ Աշտարակցի, իւր օծման առաջին խակ տարում 1846, սկսաւ Ճակի շինութիւնը՝ Ամէօն Կաթուղիկոսի շինած թղթաշինութեան համար փոքրիկ լճակի տեղը Պաղարապատի դբան հանդէպ ի հարաւ, որոյ կոփածոյ քարինքը փակել է տուած եղել իւր նախորդը:

Այս նոր և ընդարձակ երկար ու քառակուսի լճակը, որ շինեց բոլոր կոփածոյ քարով՝ վեց կանգուն խորութեամբ, երկու հարիւր քայլ յերկայնութիւն և իննսուն ի լայնութիւն, շրջապատ աստիճանաւ գէպ ի ներքս, հազիւ թէ չորս տարում լրացեալ էր մեծագումար ծախսով, զառաջինն աւելի խոր շինելու պատճառաւ՝ ջուրը չպահեց. ուստի և կրկին ծախսով քակեց, խորացրուց մինչև ինն կանգուն (երեք սամէէն), և աստիճանները վերցնելով, նոր և հաստատուն շինեց մէկ տափական միայն թողելով որմոց բարձրութեան մէջ տեղը՝ աշմառուայ ջրոյ պակասութեան ժամանակի՝ թէ անտառը ոռու-

գելու, զոր լճակի ներքեւ տնկեց, և թէ միաբանից ու եկաւու ըստ զբօսանաց համար:

Լճակի այս շինութեան հետ երկրորդ տարին՝ այն է 1847 գարնան՝ սկիզբն արաւ և շինութեան ընդարձակ և մեծակառոց դոմանոցին Եթոռոյ արեւելեան հարաւային կողմը պարսպէն դուրս՝ տնտեսատան ասացեալ մեծ պարտիզէ տեղը, որ Ա. Գայիանեայ Պանից արեւելեան կողմն էր. և լճակի շինութեան հետ աւ արտեց քառակուսի ընդարձակ շինուածովք գոմոց, մարտաց, խոտատեղւոյն, տնտեսատան և մառանի շինուածովը երկու մեծամեծ դրաներով քառարաժին շինութեանց մեջ՝ մին արեւմտից կրկնայարկ կոփածու քարով. որոյ երկու կողմն են տնտեսատունն, մառանն և վերակացու ի բնակարանն. և միւսն՝ յարեւմտից, ընդ որ անասունքն կելանեն ի դաշտ, ուրոյ վերնայարկն է ամառուայ բնակարան արմտեաց կասերու ժամանակ:

Եյս շինութեանց հետ սկսաւ և մեծագործ անտառը տնկել տալու լճակի հարաւային կողմի ընդարձակ դաշտում, երեք սառնայ հողի երկայնութեամբ և երեք բաժին լայնութեամբ. և լցրուց պտղատու թթենի և վայրի ծառերով թէ շինութեան և թէ վառելու համար. որոյ և ներքի երկու կարգ բաժինը՝ Ներսիսի վախճանէն ետքը Եթոռոյ կառավարիչք տնկել տուին:

Ենտառի թթի ծառերը հասնելէն ետքը, շերամի գործարան ևս շինել տուաւ. Կերսէս Ոիմէօնի թղթաշնութենէն մնացած մէկ սենեկի մէջ՝ ուռւ արհեստաւորաց ձեռքով. իւր վերջն տարիները շինեց յաթոռումն և շաքարի գործարան, բոյց մնաց թերի:

Եթոռոյ պարսպումն եղած շուկայն, որ վաղուց արդէն հնացած էր և խարխալեալ, Մատթէոս Ավթուղիկոսի օրով քակեցին բոլորովին՝ մենաստանը յամէն կուսէ աղտեղութենէ մաքրելու, մանաւանդ որ Ա. անքի մտից վրայ լինելով այս խառնիխուռն կրպակները, ընդ որ մեծամեծ անձինք կյածա-

խէին յԵթոռս, բաւական անվայելչութիւն կը պատճառէր Վանքին. ուստի պարսպէն դուրս հիւսիսային արևմտեան կողմը Վաղարշապատ գիւղի հանդէպ, նոր ի նորոյ շինեցին ընդարձակ և քառակուսի շուկայն՝ չորս մեծամեծ դրամքը կուփածոյ քարով, հարիւր երեսուն կրպակով. յառաջները շրջապատ զարդարեցին կամարայարկ սիւներով՝ թրծած աղիւսով. որոց և որմը արտաքուստ եղած է նոյն իսկ շուկային՝ պարիսպ քառակուսի:

Գէորգ Վեհ. Ավթուղիկոս՝ որ այժմ կվարէ իշխանութիւնը, յաջորդելով հայրապետական Եթոռը, յամին 1867, նաւխորդ Ավթուղիկոսաց մեծագործութեան հոգւով վառուեց, որոց արարքը և գործք տեսնելով ի Ավթուղիկէ Խկեղեցին, և նոցա երկար ժամանակի ընդհատութիւնը, երբ նոյն իսկ տաճարի մէջի վայելչութիւնը իւր առաջին անշքութեանն էր հասել, միաբք դրաւ Եթոռս ընդհանրապէս վայելչացնելով հանգերձ, նախորդ Ավթուղիկոսացն Ոիմէօնի, Պուկասու ևլն. մեծագործութեանց հետեւել, և մշտնջենաւոր արարք թողուլ ի Սուրբ Ավթուղիկէս:

Ուստի ի Ոսուսաստան ձանապարհորդած ժամանակ նոյն թուականին, երբ որ քաջալերութիւն ևս լսեց ազգիս յառաջաւորներէ, և եկեղեցական տեսչութենէն գտաւ օժանդակութիւն, գառնալով յԵթոռս՝ երկրորդ տարին, 1868, սկսաւ շինել Ավթուղիկէ Խկեղեցւոյ Տաճարին կից արեւելեան լայնութեան հաւասար՝ երեք նորակառոյց խորանները միանգաման, պահելով արտաքուստ Խկեղեցւոյ խաչաձեւութիւնը. որու աւրեւեան թելը կկացուցանէր Եւադ խորանի արտաքին կիսաբոլորակ շէնքը՝ երեքն ևս կոփածոյ քարով, կամարայարկ և գմբէթայարդ, մեծամեծ լուսամուտներով, որոց միջինն ևս կիսաբոլորակ, որպէս ասացի՝ Խկեղեցւոյ խաչաձեւութիւնը պահելու համար արտաքուստ; Եյս կիսաբոլորակի մէջն է դրուած

մարմարոնեայ քարով այս նոր շինութեանց արձանագիրը, յաւմբ 1869*):

Տաճարի հարաւային խորանի դռնէն կմտնեն երկու խորանը ևս մէջէմէջ դռներով:

Հիւսիսային և արևելեան կողմի խորանները յարդարեց պաշարան եկեղեցական բոլոր թանկազին զարդուց և մասամց սրբքոց՝ իրեւ թանգարան հնութեանց՝ գեղեցիկ դարակներով. որոց յառաջնում զետեղեց զգեստք, արծաթեղէն սպասք և հնութիւնք. երկրորդի մէջ բոլոր սրբութիւնք. իսկ հարաւային խորանը օրհնելով անուամբ սրբոյն Գհէորդայ զօրավարի, մեծամեծ դարակներով զարդարեց՝ առ ձեռն գործադրելի սպասուց համար պահարան:

Այս երեք խորանաց կիսագմբէթներու զլուխը ոսկեզօծ մեծ խաչերով զարդարեց, և կապարով ծածկեց:

Եկեղեցւոյ մէջ հին խորանների դռները բարձրացրուց և կամարակապ բարաւորեց. առաջին դասերը որպէս և ատեանը Աստուածածնի սեղանոյ յառաջ՝ թափուածու և ծաղկաձև երկաթի վանդակներով պատեց. Խջման տեղի սեղանոյ ատեանը ևս արձակ լինելու համար համովիսաւոր օրերում Եկեղեցական ուխտը թափօր կանգնելով՝ Եղիազար Կաթուղիկոսի զրած երկու ստուար քարերը վերցնել տուաւ:

Իսկ Եկեղեցին զարդարեց ջահաճեա ապակեաց գեղեցիկ կանթեղներով, որպէս առաջի դասը, նոյնպէս և Խջման տեղւոյ Կաթուղիկի շըջապատը. ըստ որոյ և Եկեղեցւոյ միջին վայել-

(*) Այս խորանների շինութեան մեծ և առաջին պատճառն էր Տաճարի միջի կողմանական խորանների փոքրութիւն և անձկութիւնն, որոնք իրենց մըութեամբ և միակ անձուկ լուսամուտներով անվայելութիւն կրերէն սյսպիս Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ վայելը շինութեան, որոց մէջն օդ չխաղաղով, Եկեղեցական զարդք ու թանկազին զղեսաները փտուաթեան կենթարէէին, մանաւանդ հարաւայինը որոյ մէջ խոռն ի խոռն և իրարու վրայ կդուէին զղեստք՝ արծաթեղինաց հետ տեղւոյ անձկուամենէն ստիպուելով:

չութիւնը համակերպելու՝ ըստ մեծ վայելը ութեան անուանն, Աւագ խորանի և սրբոյն Ատեփաննոսի և սուրբ Յովհաննու սեղանների համար թանկազին վարդագոյններ բերել տուաւ, — նու էրք Տիկիսեցի բարեպաշտից. — կարմիր մախմուր աւագ սեղանին, և գեղին ծաղկեայ աթլաս երկու սեղաններին:

Տաճարի այս շինութեանց հետ Կաթուղիկոսարանը ևս զարդարեց. Վեհափառ Հայրապետը վայելուչ շինքերով. Կաթուղիկոսարանի մօից գուռով՝ որ իւր նեղ և անձուկ փոքրկութեամբ անվայել էր Կաթուղիկոսական տան, փակեց զայն, և նորանից ինն կանգուն դէպ ի հիւսիս Կաթուղիկոսարանի ներքնայարկը բանալով, անհեկաց միջոցը կտրեց և մեծ ու կամարայարկ գուռն կանգնեց սրբատաշ քարով. որոյ ներքին ելքը դէպ ի վեհարան՝ երկու կողմից քարէ սանդուղներով բարձրացան. և այս զրան ներսի կամարայարկի վրայ՝ տախտակամած և գեղագործեալ նոր գուռն կանգնեց դէպ ի Վեհարան շըլափակ ապակի լուսամուտներով, գրեթէ Կաթուղիկոսարանի կիսարաժնի մէջ, այն տեղ՝ ուր Յովհաննէս Կաթուղիկոսն ևս դուռն էր թողել, բայց Կերսէս Կաթուղիկոս փակեց:

Իսկ զրատան մուտքը՝ որ բոլորովին անյարմար էր Վթոռոյս մեծվայելը ութեան, և տանեաց Ճանապարհով Վեհարանի միջով կելանէին ի վեր այցելուք, գեղեցիկ ևս յարդարել տուաւ:

Գրատան դուռը՝ որ կբացուէր արևեմտից Գանձարանի կարգն եղած ներքնայարկ սենեակների տանեաց վրայ, արևմտեան լայնութեան հաւասար շինել տուաւ տախտակամած մեծ սրահ զրատան դուռը մէջ առնլով. զարդարեց նստարանօք և յարդարեց զայն ընթերցարան միաբանից. որոյ շինքը կցելով ի հարաւոյ Վեհարանի հետ, ներքուստ մինչ ի վեր կանգնեց սանդուիք, Ճախարակաւոր և զրան առաջի պատշգամը՝ գոյնզգոյն ներկով գեղագործած՝ զրան բարձրութեանը հաւասար մեծ մեծ լուսամուտներով զարդարեց:

Պաղարապատ ասացեալ հիւսանոցը, որ խախտացած էր վաղուց, բոլորը նորոգել տուաւ և շըջապատ տախտակամած

Ճեմելիքը սենեկաց յառաջ հանդերձ սանդուղներով նոր ինուրոյ շինեց:

Վթոռոյս մեծակառոյց և հոյակապ Շեմարանը ևս նոյն թվաւականէն, 1869, սկսաւ շինել Եկեղեցւոյ խորանաց հետ. որոյ հիմնարկութեան հանդէսը նոյն տարուայ Մայիսի ամսին Եկեղեցական օրհնութեամբ կատարեց. և երկու տարուամ պատից շինութիւնը աւարտեց՝ երեսներն կոփածոյ քարով, որու ներքին փայտեղէն և ատաղծագործ բովանդակ պարագայքն ու դեղագործութիւնքը չորս տարուայ միջում լրացան:


Ի մեծ վայելչութիւն նորակառոյց Շեմարանին որպէս և գիւղին առ հասարակ, Վթոռոյս պարսպի հիւսիւսային դրան առաջի երկայն հրապարակն ընդ մէջ պարսպին և գեղջ, ուր որ յառաջն զիւղացւոց նախիրը կժողովէր աւաւոտ և երեկոյ, և ոչ սակաւ օդոյ անմաքրութիւն կպատճառէր, յարդարել տուաւ հասարակաց պարակղ (բուլվար) դրան յառաջէն պարսպի երկայնութեամբ ի ծայրէ ի ծայր՝ մինչև Շեմարանի յառաջը, երեք հարիւր քսան և չորս կանգուն երկայնութեամբ և իննըսուն կանգուն լայնութեամբ. ուր վայրի և ընտանի նորատունկ ծառեր կարգ ըստ կարգէ տնկելով, բոլոր շրջապատը դեղազործեալ սիւնեակներով ցանկապատեց. որ այժմ ոչ սակաւ զիւղի անշքութեանը շուք և քաղաքի կերպարանք կտայ ի մեծ զուարծութիւն թէ ծառայողաց քաղաքական կառավարութեան որ ի Վաղարշապատ ամառ ժամանակին, և թէ բոլոր զիւղացւոց զբոսանք՝ եկին և օտարին:

Դամկի եղելքը՝ որ Ճեմելու համար երկու կարգ շրջապատ Փարշած էր կոփածոյ քարով, մի կարգ ևս աւելցած էր Մատթէոս Կաթուղիկոսի օրով, այս եղերաց ուղղութեամբ երեք կարգ ծառերով շրջապատը զարդարեց, որ ամառը մեծ վայելչութիւն կտայ լճակին, և Ճեմողաց ոչ սակաւ զբոսանք:

Անտառի արևմտեան կողմէն կից նորան նոյն երկարութեամբ և լայնութեամբ նոր անտառ ձգեց, բոլոր լեռնային և վայրի նորատունկ ծառերով. որոց կէս մասին ծառերը վերուստ ի

վայր ձգուած են և հասունացած. ուստի բոլոր անտառը ապահով պահպանելու համար՝ շրջապատ պարսպեց:

Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ ստորագրութիւնը ամբողջացնելու համար՝ հարկ էր առնել և նորա տեղագրութիւնը ըստ կարգի. ըստ որում երեքին նորաշէն խորանները միացած են տաճարի հետ. բայց ըստ որում յիշեալ խորանաց շինութիւնքն արդէն ստորագրեցինք, աւելորդ կհամարիմք կարգել Եկեղեցւոյ տեղագրութիւնն էլ, թողլով ընթերցողաց տեսնել զայն յԱռաքել պատմագիրն և Հահիթ. Յովհաննէս եպիսկոպոսի Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ստորագրութեան մէջ:



Տ. Եկեղեցի արքոյն Հարական կառավագիր ՅԱՐԱՆ

Վաղարշապատայ երկրորդ Եկեղեցին՝ զոր շինեց սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր սրբոյն Հռիփսիմեայ կուսի գերեզմանի վրայ՝ նոյն քաղաքի հիւսիսային արևելեան կողմն է, քառարդ ժամու հեռաւորութեամբ, ուր նահատակուեց սուրբ Հռիփսիմէ իւր ընկերներով, և վանքն կառուցաւ նորա իսկ անուամբ ի 301 թուականին:

Մատուռն գերեզմանին Հռիփսիմեայ, որոյ մէջ դրուած է և արկղն նշխարաց՝ է ուղղակի սեղանի բեմի տակին, փոքրիկ կամարակապ՝ երկայն՝ մարդաչափ բարձրութեամբ, որոյ մուտքն կրացուի հիւսիսային կողման խորանի մէջ երեք աստիճանաւ դէպ ի ներս:

Գրիգոր Լուսաւորչի շինած Եկեղեցին՝ Հռիփսիմէի գերեզմանի վրայ, թէ ի՞նչ նիւթից էր կամ ի՞նչ ձե, Եգաթանգեղոս չե յիշատակիր. այլ միայն սուրբ կուսի գերեզմանի համար կղը թէ՝ նա ի՞նքն Տրդատ փորեց սրբոց գերեզմանատեղը արշեղաց չափով, զոր սուրբն Գրիգոր առւաւ նորան, որ նոցա մէջ շինեց նոցա հանգստեան մարտիրոսական յարկը (Եգա-

թան. եր. 287). միայն յետագայ պատմիչք կաւանդեն տաճառի շինութիւնը ի սուրբ Առևտորչէն։ Ինչպէս յառաջ կը բերէնք։

Առևտորչու շինած սրբոյն Հռիփսիմեայ տաճարը Շապհոյ զօրքն կործանեց 380 փրկչական թուին, զոր ապա տասն և հինգ տարիէն ետքը 395, սուրբն Առհակ Պարթև նորողեց, և յանգէտու բանալով սրբոց տապանատեղին, տեսաւ սուրբ Առևտորչի կնիքը սուրբ կուսի տապանի վրայ. յորմէ իւր փափաքն առնելով, առանց բանալոյ տրկին, ինքն ևս կնիքեց։

Եյս երկրորդ շինութեան վրայ երբ որ անցել էր արդէն երակու հարիւր քսան երեք տարի, Կոմիտաս Կաթուղիկոս՝ որ նախ Փակակալ էր Հռիփսիմեայ վանից, ինչպէս պատմիչք կվկայէն, իւր Կաթուղիկոսութեան իսկ առաջին տարում 618 թուին՝ Առհակ Հայրապետի ժամանակէն շինուած ցած ու մթին շինուածքը քակելով, պայծառ և վայելուչ ևս շինեց Հռիփսիմեայ կուսի Եկեղեցին կոփածոյ քարով, լայնանիստ կաթուղիկէիւ՝ շրջապատ պատշգամով իներքուստ. և արտաքուստ շրջանակը և լուսամտաց կիսարոլորակ կամարները բոլոր փորուածոյ դրուագներով, և տանեաց վրայ Կաթուղիկէի չորս կողմը չորս բոլորակ սենեակներ, որոյ դուռը կրացուի պատշգամին մէջէն։

Կոմիտաս Կաթուղիկոսի այս շինութեան համար կվկայէ նուրա ժամանակակից Սերիսս Եպիսկոպոս պատմիչ նոյն եօթներքորդ դարում, այսպէս։

“Յամի ՏԲ. թագաւորութեան Վայրումզ Խոսրովու քակեաց Կաթուղիկոսն Կոմիտաս զմասուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի. զի կարի ցած և մթին էր շինուածըն. զոր շինեալ էր սրբոյն Առհակայ Հայրապետի Հայոց Կաթուղիկոսի որդւոյն սրբոյն Կերպիսի,,։”

Եյս շինութեան ժամանակ ևս սուրբ Կուսին դադաղը հանելով Կոմիտաս, և չհամարձակելով բանալ, որու վրայ տեսաւ Առևտորչի և մեծին Առհակայ կնիքը, ինքն ևս կնիքեց. և այն-

պէս բացօթեայ թող տալով դագաղը յուխտ և ի համբոյր ժողովրդոց, Եկեղեցւոյ շինութիւնը լաւ ցամաքելէն ետքը՝ արկղը ամփոփեց վերստին իւր կայանին մէջ։

Կոմիտաս Կաթուղիկոսի Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը կյիշատակին յետագայ պատմիչք ևս՝ ինչպէս Քովհաննէս Կաթուղիկոս յիններորդ դարում. Ատեփաննոս Նսողնիկ տասներորդին մէջ. բայց Կոմիտասայ ժամանակակից պատմագրի վկայութիւնը բաւական համարեցինք վասն հաստատութեան միայն յառաջ բերել, մեր ստորագրութիւնը աւելորդ տեղը չի երկարացնելու համար։ Միայն յիշեալ Հայրապետի շինութեան արձանագիրը աստ կօրինակենք, որ կայ յիշեալ Եկեղեցւոյ աշբեմտեան դրան կամարէն վեր որմի մէջ, ըստ այսմ։

“Ես Կոմիտաս Եկեղեցապահ սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ յԵթու սրբոյն Գրիգորի, և շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի,,։”

Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը Կոմիտաս Կաթուղիկոսէն՝ յընթացս տասն դարուց՝ 618—1653՝ ժամանակի աշխարհքի բունութեանց դէմ գրեթէ մաքառելով և անհնարին փոփոխութիւններ կրելով՝ կէս մի ամայութեամբ՝ կէս մի աւերանքով, անցուցել էր արդէն այդ դարաւոր ժամանակները. երբ որ Պալտից և Օսմանցւոց փոխադարձ պատերազմաց երեսէն փոքր մի խաղաղութիւն գտնելով Հայաստան՝ Վզգիս Կաթողիկոսունք վերստին սկսան նորոգել Վաղարշապատայ կաթուղիկէն՝ և վերստին տարագիր ու հալածուած հոգեոր միաբանութիւնը ժողովել այդ Վստուածահածոյ պատսպարանների մէջ, ի գութ շարժեցաւ Փիլիպպոս Կաթուղիկոսը Կաթուղիկոսական տան շինութեանց հետ՝ և Հռիփսիմեայ վանքի բոլոր աւերանքը շինել, և Եկեղեցւոյ քայքայեալ որմերը, տանիքը և այն ամենայն սրբատաշ քարով նորոգել. ուրոնք գրեթէ բոլորն ի հիմանց նոր ի նորոյ շինեց միաբանք կարդելով անդ, ի 1653 թուին. որ յառաջ անմարդարնակ և

ամայի էր, որոյ և արձանադիրն Առմիտաս Աաթուղիկոսի արձաւ նազրի ներքեւ կտեսնութիւնը այսօք:

“Ի թուին ՌՃՌ (1653) Վրիստոսի ծառայ Փիլիպպոս Աաթուղիկոս ամենայն Ճայոց վերստին նորոգեցի զեկեղեցին սրբոց կուսանացն Առիփսիմեայ և Գայիանեայ,, :

Եղիսաբր Կաթուղիկոսն ևս՝ որ շատ եկեղեցիք շինեց, որոց համար Աիմէոն Աաթուղիկոս կվկայէ, Առիփսիմեի վանքի մէջն ևս բաւական նորոգութիւններ արաւ:

Աիմէոն Աաթուղիկոսի շինութեանց ժամանակ ի Աաթուղիկէն, նորա սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոս իւր արդեամբք և ի միշտակ Առիփսիմեայ վանաց քառակուսի պարիսպը շինեց չորս բրդով, հիւսիսային կողմը կանգնելով կամարակապ մեծ դուռն. որու արձանադիրն դրուած է դրան կամարի մէջ, և ՌՌԴՌ, 1776 թուին:

Իսկ 1790 թուականին՝ Պուկաս Աաթուղիկոսն Փիլիպպոսի շինած Եկեղեցւոյ փոքրիկ գաւթի վրայ կառուցանել տուաւ վայելուչ Աաթուղիկէ սրբատաշ քարով չորս սեան վրայ, Թռողայեցի Խաչիկ իշխանի արդեամբք, որ կընակէր Անդկաստանի Վաղկաթայ քաղաքը. և սորա շինութեան արձանադիրն է զանգակատան մէջ՝ դրան հիւսիսային կողմը, նոյն թուականում:

Տաճարի շինքը դրսի կողմէն քառակուսի է՝ բայց ներքուստ բոլորշե, ըստ որում որմասիւնները հիւսիս և հարաւային որմեռէն յառաջ դարձ՝ բոլորշի ձեւ են կացուցել ներքուստ՝ որոց վրայ է լայնանիստ Աաթուղիկէն. Ճապաղած արտաքուստ տանեաց վրայ, միջե կողմը ունի Աաթուղիկէն շրջապատ պատշաճմբ. որոց մէջ կրացուի Աաթուղիկէի չորս կողմը շինած տանեաց վրայ բրդածե սենեկաց դոները, որով և չորս լուսամուտ միայն ունի լայնանիստ Աաթուղիկէն:

Ունի մի սեղան պատարագի և չորս խորան առաջին և յետին դասերի կողմնական անկիւններում, և այն արժանայիշատակ Աաթուղիկոսոց գերեզմանները կան տաճարի մէջ, որոնք սկը-

սած Առմիտաս Աաթուղիկոսէն՝ նորոգել են Առիփսիմեի վանաքը կամ շինութիւններ արել. բեմի առաջին Առմիտաս Աաթուղիկոսի տապանն է. որոյ տապանաքարն հաւասար է սաւլոյատակի հետ, որ ի սկզբանն այնպէս վայելուչ կոփածոյ քարով կանգնեց այս տաճարը եօթներորդ դարու ճարտարութեամբ:

Փիլիպպոս Աաթուղիկոսի դամբարանը աջակողմեան դասի հիւսիսակողմն է բարձր տապանաքարով, որ տաճարի վերջին վայելչացնողն է և շնացնողը դարաւոր ամայութենէ:

Իսկ արեւմտեան դրան առաջին արտաքուստ զանգակատան ներքեւ երկուց Աաթուղիկոսաց դամբարանները կան՝ Աարապետ և Աստուածատուր Աաթուղիկոսաց: Պարսպի միջին ևս կան քանի մի շերիմներ. որոց մէջ նշանաւորն է Լէհացի Ատեփաննոս վարդապետինն, որ երեւելի է իւր պատկերահանութեամբ և զրաւոր վաստակովք:

Աիմէոն Աաթուղիկոսի օրէն սկսեալ, երբ որ պարիսպը շինուեց, բովանդակ Պարսից իշխանութեան ժամանակ շարունակ վանահայր կնստէր Առիփսիմեի վանքը, օրական հաց և կերակուր կտանէին Աթոռէս. Պարսից վերջին բոնաւորութեանց երեսէն ստիպուած ժողովուրդը շատ տեղերէ իրենց որդիքը ապահովելով՝ յլաջմիածին իրեր տեղի ապաւինի՝ կտային ի հոգեորականութիւն, մինչեւ վաթուն աշակերտք Աթոռոյ կառավարիչք կպատապարէին Առիփսիմեի վանքի մէջ՝ նոցա որշնունդ և հանդերձը հոգալով՝ յլԱթոռոյ:

Պ. Եկեղեցի ունիոյն Գայիանեայ.

Գայիանեայ, սրբոյ կուսի վկայարանը, զոր շինեցին սուրբ Առուսաւորիչն մեր Գրիգոր և Տրդատ՝ էր Աաղարշապատ քաղաքի հարաւային կողմը արտաքոյ հարաւային դրանն, սրբոյ կուսի նահատակութեան իսկ տեղը, որոյ վերայ տեսաւ Ա. Գըլլիկոր երեք լուսեղին խարիսխներէն մէկը. ուր և ամփոփեցին

սուլը նահատակի մարմինը և նորա հետ եղած երկու ընկերառաշը ցըն յ301 թուականին Վրիստոսի: Եյս շնութիւնը ևս թէ ի՞նչ ձև էր՝ որպէս և Առիփսիմեայ վանքի առաջին շնութիւննի Լուսաւորչէն, Եգաթանգեղոս ժամանակակից պատմին յայտնի չլ գրել. ուստի եկեղեցեաց յետագայ ժամանակի շենութիւններէն կիսակացուի որ Լուսաւորչի և Տրդատայ շենածները՝ մատուռներն են վկայարան նոցա մարմնոյ հանգըստեան՝ և ոչ հյակապ եկեղեցիք:

Մինչեւ եօթներորդ դարը սրբոյն Գայիանեայ վկայարանը ևս յամայութեան մէջ էր Առիփսիմեայ վանքի հետ. ուստի և Կոմիտաս Կաթուղիկոսէն եաբը, որ Առիփսիմեայ եկեղեցին շինեց, 618 փրկչական թուին, Եզր Կաթուղիկոս 630 թուին սրբոյն Գայիանեայ վկայարանի նաեմ և մթին շնչքը քակելով, շինեց ընդարձակ և հյակապ կոփածոյ քայլով՝ վայելուչ Կաթուղիկիւ, և ինչպէս կերեկ, արտաքուստ պարսպելով զայն պատրաստեց տեղի բնակութեան հոգեոր պաշտօնէից իսպասաւորութիւն աստուածային խորանին ըստ վկայութեան Յովհաննէս Օրդ Կաթուղիկոսի՝ ըստ այսմ:

“Իսկ ապա Հայրապետն Եզր զիկայարան սրբոյն Գայիանեայ՝ զոր երեմն խրթին և մթին էր շննեալ, քակեալ զայն, ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց կոփածոյ քարամբը և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին,,:

Արանից ետքը Գայիանէի վանքը ևս մնաց անխնամ և ամայի մինչեւ պարսից երեսէն երկրի խաղաղանալը. երբ որ Փիլիպոս Կաթուղիկոս Առիփսիմեայ վանքի նորոգութենէն յառաջ՝ 1652 թուին նորոգեց Գայիանեայ տաճարը գրեթէ բուլովին, և Կաթուղիկին բովանդակ, ըստ որում բոլորովին քայքայուած էր տանիքը, և Կաթուղիկին խոնարհած, միայն չորս որմունքն և չորս սիւները կանգուն կմնային, և այն՝ տեղ տեղ ծակոտուած և խրամատեալ. զորոնք Փիլիպոս Կաթու-

ղեկոս մեծ ջանքով և մեծ ծախսով նորոգեց կոփածոյ քորով ի հիմանց մինչեւ գմբէթը. որոյ վերայ և հաստատեց նշան տէրունական խաչին, ինչպէս Եռաքել պատմագիրն կվկայէ:

“Բայց սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերաւ եալ էր. զի տանիքն բովանդակ իջեալ էր. միայն շուրջանակի որմունքն և չորեք սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց, և յատակ որմոցն աստ և անգ ծակոտեալ և խրամատեալ. որոց արար նորոգման սկիզբն Կաթուղիկոսն տէր Փիլիպպոս մեծախղձ կարօտիւ և ջանիւ. և զբազում գանձս ծախսելով, նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչեւ ցգագաթ գմբէթին, յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին,,:

Փիլիպպոս Կաթուղիկոսի արած այս նորոգութիւնն սուրբ Գայիանեայ վանից՝ եղեւ Փրկչական 1652 թուին, և Հայոց Ուռչ, որում գործավար և վերակացու կարգած էր Յովհաննէս արեղայ ոմն, գործունեայ և արդիւնաւոր մարդ. որ Եռաքել պատմագրի վկայութեան նայելով, տարակուսելով թէ սուրբ կուսի նշխարըը անդ է թէ ոչ, որովհետեւ մատուռը բուլովին աւերուած էր, բեմի հետ՝ որոյ վերայ շինած էր, առանձին ժամանակ կրանայ սուրբ կուսին գերեզմանը, և հաստատութեան համար մասն մի ի նշխարացն առնլով, վերսահն կամրացնէ զտեղին. այլ մեք ըստ որում սրբոց կուսանաց պատմութիւնը չենք գրում, այս պատճառաւ ինչպէս սրբուհոյն Առիփսիմեայ նշխարաց, նոյնպէս և սրբոյն Գայիանեայ՝ կթուղունք ի բաց, որ արտաքս են եկեղեցեաց պատմական ստորագրութենէն:

Երեսուն տարի Փիլիպոսէն ետքը Եզրեազար Կաթուղիկոս դառնալով յ Լամբիածին, Եթոռոյ մէջ արած մեծամեծ շինութեանց հետ՝ սուրբ Գայիանեայ վանքին շինեց վայելուչ գաւկիթ՝ կից Եզրեղեցւոյն արևմտից. երկու կողմից ևս երկայնեալ քան տաճարի լայնութիւնը. և այս երկայնութեան հիւսիսային և հարաւային կողմերում յարդարեց փոքրիկ սեղաններ սրբոյն Փիլիպոսի և Պողոսի անուամբ, փոքրիկ զանգակատնե-

ըով. քառակուսի պարսպով պատսպարեց վանքը. և հոգեու ըականաց բնակութեանց համար՝ կանգնեց հարկաւոր շինութիւնք և հաստատեց միաբանութիւն անդ, ինչպէս զրուած է արձանագրի միջ՝ որ տաճարի արեւմտեան դրան ճակատի վրայ ի ներքոյ նորաշէն գաւթին:

Եյն ժամանակէն սկսեալ շարունակ կնստէր վանահայր Գաւյիանեայ վանքում. և ինչպէս որ զրեցինք Նորիփսիմեայ վանքի համար, նոյնպէս և Գայիանէի վանահարք Պարսից ժամանակին Աթոռէն կտանէին հաւասար օրական հաց և տարեկան հանդերձ, ըստ որում ուրիշ միջոց չունէին կառավարութեան:

Պատերազմէն ետքը՝ որոշեցաւ այս երեք վանքերի համար ևս վարելահող և տրուեցաւ նոցա ՅԱթոռոցս՝ լծկան և կթի անասունք: Եյս միջոցիս ևս Տփխեցի ոմն Գողի անուն՝ որ երակար ժամանակ յԱթոռս կծառայէր, յիշատակ թողուց Գայիանէի վանքին մէկ մեծադիր այգի, զոր իւր արդեամբը շինեց, և իւր ծախսովը հասոց ի պաղատուութիւն:

Եկեղեցին է երկար քառանկիւնի, բարձր՝ հոյակապ կաթուղեկեիւ չորս սեան վիրայ. ունի երեք գուռն և մեծամեծ լուսամուտներ. տաճարի հիւսիսային գուռը և քանի մի կողմնաւկ սամուտներ փակուած էին յառաջագոյն, և արտաքուստ ի տեղիս տեղիս խախտուած որմունքը:

Եկեղեց ժամանակումն Տփխիսեցի Եղիա Շաստամեանց ուսումնական երիտասարդը, Աղաքրեանց Ճեմարանի աշակերտութենէն Մոսկուայի կայսերական Համալսարանում իրաւաբանական գիտութեան ուսումն աւարտելով (կանդիտատ կոչումով) եկաւ սուրբ Աթոռս Եղմիածին, ուր յարատելով մերձ երկու տարի, ապա ըստ իւր ցանկութեան և բարեհանդութեամբ Ահամակառ Աթուղիկոսի ձեռնագրուելով Միաբան Ա. Գայիանեայ վանից, կոչեցաւ Ահամական վարդապետ, և կարգուելով յիշեալ Անքին վանահայր 1872 թուականին, բուլը եկեղեցին ներքուստ և արտաքուստ վայելչապէս զարդա-

րեց իրեն տարեկան նշանակած սննդադրամովն և նուիրաւ տուութեամբ ժողովրդոց՝ որմոց խախտուածները նորոգեց. հիւսիսային գուռը և փակած լուսամուտները բանալով, բոլորը ևս մեծացրուց ի պայծառութիւն տաճարին:

Իսկ Եկեղեցւոյ արեւմտեան ճակատը փակող հին սենեակւները քակեց, որք հիւսիսից հարաւ երկարացած իրեւ ներքին պարիսպ կձեւանային և գաւթի տեսքը կփակեին արտաքուստ, տաճարի արեւմտեան դրան հանդէպ, ուղղաձիգ և լայն ճանապարհ բանալով, պարսպի մեծ գուռը դիմացէ դիմաց կանգնեց նոր ի նորոյ կամարայարկ, որ յառաջ փոքր ինչ վեր էր դէպ ի հիւսիս:

Հին սենեակների հարաւային ծայրն եղած ներքնատան վերայ շինեց նոր և գեղեցիկ սենեակներ բնակութեան համար մեծ լուսամուտներով և արձակ պատշգամբ կանգնելով յարևելեց, ընդ որ դրան մուտքն է, սենեակաց մէջ պատրաստելով և փոքրիկ դպրոց, ուր կուսանին Այերէն և Ոռուսաց լեզու ըստ մեծի մասին Աղաղարշապատումն եղած քաղաքական ատենից մէջ ծառայողաց որդիք:

Հիւսիսային բաժնում ևս կառուցել է արդէն նոր սենեակւների հանդէպ երկու երես մեծադիր շինուածք չեւ ևս ծածկուած, որոց մէջ պէտք է լինին վանքի այլ հարկաւորութեանց համար զանազան սենեակներ և տպագրատուն. որոյ համար բերած է Ահամական վարդապետ մի հատ տպագրութեան մասմուլ. որով կտպագրէ արդէն Դպրոց Ամսագիրը. որում կը մաղթեմբ յԱթոռուծոյ և ևս արիութիւն և յաջողութիւն՝ որ ուրիշ վանօրէից և վանահարց օրինակ կլինի թէ տպարանի հաստատութեամբ, և թէ ամենայն շինութեամբ և բարեվայելութեամբ պայծառայնելով զսուրբ Գայիանեայ վանք շնորհիւ Ահամակառ Այրապետին մերոյ:

Դ. Շաղամի անուանեալ Եկեղեցի պիտի էուայն. 1).

Արբայն Գրիգորի և Տրդատայ շինած վկայարանների մին ևս էր “Ի տեղոց հնձանին,,՝ ուր սուրբ կուսանացն Հռիփսիւմեանց օթեանքն էին, և ըստ տեսլեանն՝ երեք լուսեղին խարսխաց մին անդ իջած, Եգաթանգեղոսի վկայութեամբն ըստ այսմ:

“Եւ նայեցայ և տեսանեմ այլ խարիսխս երիս, մի ի տեղոց ուր վկայեաց սուրբն Գրայիանէ երկու ընկերօքն. և մի ի տեղոցն, ուր վկայեաց սուրբն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և մի ի տեղոց Հնձանին,,. (Եր. 272.) որոց տեղը վեկայարան կանգնելու համար ևս՝ կգրէ այսպէս. ‘Պանգնեալ երիս վկայարանս մի ի հիւսիսոյ արևելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն. և զմիւն շինեցին ի հարաւակողմն կուսէ անաի, ուր վկայեաց սուրբն Գրայիանէ նորուն սնուցիչ երկու ընկերօք. և միւն մօտ ի Հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա,,,: (Եր. 279:)

Եւ այս երրորդ վկայարանը կանգնեցաւ մենաւոր կուսի 2) սպանման տեղը “մօտ ի Հնձանն,,. որ իւր հիւանդութիւնը իւր նահատակութեան աղօթից մէջը ցոյց կայ ըստ Վրաթանգեղոսի. “Պոհանամաց զքէն Տէր բարերար, զի և զիս ոչ զըկեցեր, զի և ես հիւանդ էի, և ոչ կարացի ընթանալ և ըզշետ ընկերացս ժամանել,,,: (Եր. 69:)

(1) Շողակաթ կանուանէր ըստ յառաջ բերեց և Յովհ. Եպիսկոպոսի Պահապաննեան՝ Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ. իսկ մենաւոր կուսի վկայարանը նախ քան այժմեան հյակապ Եկեղեցւոյ շինութիւնքը՝ մէջէս կիրեի յառաջ բերած Արձանագրէն՝ Հնձանեաց մատուն կը կոչուեր. ուստի Եկեղեցւոյ շինութենէն ետքը՝ կիրեի սովորութիւն եղած Շողակաթ անունը:

(2) Ագաթանգեղոսի հիւանդ կուսին անուն չի նշանակեր բայց միայն մենաւորն, կգրէ որ ի Հնձանին սպանաւ. (Եր. 283:) Ուստի այլ անուն ընծայել նմին՝ հաւանական չի երեխ արտաքոյ պատմութեան:

Լուսաւորչու շինած վկայարանէն ետքը՝ Հնձանի վերայ կառուցաւ մատունն հոյակապ և կոփածոյ քարով, տաճար փոքրիկ, ըստ նորա Արձանագրին, ըստ այսմ՝ Շինեցաւ Հընձանեաց մատունս ի թուին Զ. Ռ. որոյ և աւերակը մինչեւ ցարդ կմնայ ձանապարհի վերայ հանդերձ իւր շրջապատ աստիւններով. միայն արձանագրի փոքրիկ խաչքարը՝ զետեղած են Եկեղեցւոյ պարսպի հիւսիսային արևեմտեան բրդան վերայ մարդաշափ բարձրութեամբ, ինչպէս կերեկ, մատուուր քաշկուելն ետքը դրած են անդ վասն յիշտակի 1):

Այժմեան հյակապ փոքրիկ Եկեղեցւոյ շինութիւնն եղած է՝ Կաթուղիկոսի ժամանակին, որ շինեց զայն արդեամբք Շողոթեցի Աղամալ անուն իշխանին յամի 1694, կոփածոյ քարով՝ անսիւն և վայելուչ Կաթուղիկէիւ չորս լուսամաով, և երկու զոնով արևեմտից և հարաւոյ կողմէն. որոյ հարաւային խորանի մջն է մենաւոր կուսի տապանաքարը. և շինութեան արձանագրին է արևեմտեան դրան ձաւկատի վերայ վերոգրեալ թուականով:

Ունի գաւիթ փոքրիկ զանգակատնով՝ արևեմտեան ձակատի լայնութեամբ, որոյ մէջ դրան հիւսիսային և հարաւային բաժնում ամփոփուած են՝ Կաթուղիկոս և Արետացի Արքահամ Կաթուղիկոսաց մարմինը:

Այս շինութեանց ժամանակ ընդգրածակ քառակուսի պա-

(1) Արձանի թուականը Զ. եւ Գ., տարակուսութեան մէջ կձգէ զընթերցողս. որովհետեւ չի որոշել փրկչականն է եթէ Հայոց թուական. Ազգիս սովորականին նայելով՝ ի Հնումն հայ թուականն ի գործ կրնէին. ըստ այսմ եթէ առնունք զայն երկուտասաներորդ գարու մէջ գրուած, այն է ի 1154 թիւ Փրկչին, յիշատակութիւն չեմք գտնել առ պատմագիրս՝ Հընձանեաց մատրան շինութեանը իսկ եթէ վերածեմք զայն ի փրկչական թիւ, այսինքն ի 603: և ոչ պատմանակ կյիշեն պատմիչք սցդպիսի շինութիւն. միայն թէ այդ թուականէն տասն և հինգ տարի ետքը՝ Կոմիտաս Կաթուղիկոս կընէ Հուիսիմեայ վանքը ինչպէս նորա ստորագրութեան մէջ:

բապով պատել են վանքը չորս բուրգերով . որոց հիւսիսառ յին արևմտեան բրդան վերայ և վերը դրած արձանազրի փոքրիկ խաչքարը ճանապարհի վերայ՝ պարսպի կամարակապ դրան մօա . որոյ ներքոյ և այժմ իսկ խաչ և Աւետարան կդնեն իւ համբոյր ժողովրդոց, Զատկի Մեռելոց երկուշաբաթի օրը . ու ըոնք գիւղովն կդան ի հասարակաց գերեզմանատուն :

Պարսից ժամանակին . Շողակաթ նստող վանահարքը բաւ ւական շէն ու պայծառ կպահէին վանքը . Յուռշաննեց ասացիւլ Յակոբ եպիսկոպոսը, որ պատերազմէն յառաջ և յետ, կնստէր վանահայր, շինարար մարդ լինելով , իւր աշխատանքով շինեց մի մեծ այդի, և թէ վանքը և թէ պարսպի մէջն եղած պարտէզները ամենակերպ վայելութեամբ այնպէս էր զարդարել, որոյ զանազան ծառոց պտուղները՝ Կաթուղեկոսաց և Հիւրոց կերթային ի վայել :

Եյս ժամանակիս ևս թէ աստ և թէ ի Հռիփսիմէ կային քանի մի միաբան կարգաւորք յԵթուոյն . որոց հաց և հանգերձ թէ և յԵթուէն էր, բայց այս վանքերը ևս ունէին առատութեամբ վար ու ցանք և անասունք ոչ սակաւ, որով միաբանից ուտելքը կպատրաստուէր :

Ե. Եկեղեցի սուբք Գրիգորի աստցեալ՝ յԵւապուրէն :

Եյս Եկեղեցի սուբք Գրիգոր կոչեցեալ, ընդ մէջն եօթնեռորդ դարու յանուն Երկնաւոր զուարթնոցն շինեց Կերսէս Գ. Կաթուղիկոսն ազգիս՝ հոյսկապ և գեղեցիկ շինուածովք ու զանազան փորուածքներով, մինչև յետագայ պատմիչք զարմացուցիչ տեսողաց կանուանէին :

Կերսէսի ժամանակակից պատմիչն Աերէս Նպիսկոպոս Քադրատունեաց Փրկչական 641 թուականին, որ նորա օրովը Դը վեայ Գ. Ժողովքի մէջ դանուեց, այս եկեղեցին յանուն Երկնաւոր զուարթնոցն կոչէ, որք սրբոյն Գրիգորի երեւցան բազմութեամբ զօրաց, ուր Տրդատ թագաւորն ընդառաջ գնաց

սրբոյն, ուստի և նոցա անուանը նուիրեց Հրաշակառոց եկեղեցին, ըստ այսմ :

,, Յայնժամ էարկ ի միտս իւր Կաթուղիկոսն Հայոց (Կերսէս Գ.) շինել իւր բնակութիւն մերձ առ սուբք եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքի ի վերայ Ճանապարհին, յուրում ասեն ընդառաջ եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի, շինեաց անդ և եկեղեցի մի յանուն Երկնաւոր զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութեամբ երկնաւոր զօրացն, և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեօք, արքանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն : Եծ ջուր ի գետոյն (Քասաղ) և արկ ի գործ զամենայն զվայրսն առապարս. անկեաց այդիս և ծառատունկս. և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկաղիր յօրինուածով բարձր պարսպաւ ի փառս Վստուծոյ,, :

Իսկ Յովհաննէս Օ. րդ կաթուղիկոս պատմաբանը՝ որ Կերսէս շինողին ամբողջ երկու և կէս դար յետոյ է, կը գրէ թէ սրբոյն Գրիգորի անուանակոչութեամբ կառոյց այս Հրաշակերտ եկեղեցին. և կյաւելու թէ նշարս ոսկերաց սրբոյն Գրիգորի բաժանելով, ամփոփեց եկեղեցւոյ չորս սեան տակը՝ այս երկնային գանձը գերիշներէն պահպանելու համար : Եյս պատճառաւ կերեի թէ սուբք Գրիգոր կոչուեց եկեղեցւոյ անունը ի յետագայից. որպէս ահա:

“ Դարձեալ յուսացեալ ի Տէր, և ոչ զմաւաւ ածեալ զկըրթական արշաւանս հինիցն թշնամեաց, գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի Տանն Վստուծոյ ըստ անուանակոչութեան սրբոյն Գրիգորի, յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Վրիստոսի. իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն հօտին Վրիստոսի, ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ գնէ զնըշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ զանձուն երկնաւորի ի գերչաց ապականչաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց. իսկ գՎրիստ

տոսադրոցը և զպատուական գլուխն ոչ ի խորոջ , այլ արտաքոյ ի գղրոցի եղեալ՝ դնէ ի գանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափագողացն նմա , և ի բժշկութիւն ախտակրելոցն , :

Եւ որովհետեւ դարաւոր ժամանակներով յառաջ խոնարհած է բոլորովին Ա . Գրիգոր Նիկոլայորդ եկեղեցի համարուած Վաղարշապատ քաղաքի , պատմական քննութեամբ նորա ըստորագրութիւնն ամբողջացնենք ի կարգս Եկեղեցեաց Վազարշապատատայ:

Զարմանալի բան է արդարեւ , թէ ընդհանուր աղջի Նայրապետական Աթոռն ի Քաղաքուդաշտի՝ ուր կաթուղիկէն Մայր եկեղեցեաց հաստատուն անդր ի Վաղարշապատ եղած ժամանակին՝ իւր մենաստանով , սուրբ Նայրապետն Աերսէս Ընող՝ կշնէն իւր բնակութեան համար՝ զուրբն Գրիգոր անջուր , անջրդի տեղ՝ յառապարին . և այն ի՞նչ ժամանակ , Յովհ . Կաթուղիկոսի ասածին պէս՝ “Ոչ զմտաւ ածեալ ըդկրթական արշաւանս հինից և թշնամեաց , :

Դիցուք թէ այս հինքն և այս կրթական թշնամիք , որ երկրի ևս տիրող իշխանքն էին , բունեալ էին ի Պվին , ուր էր Աթոռութիւն Նայրապետական , և նեղութիւն կը կրէին անդ բնակիլու , ընդէր ուրեմն և մեծ ու տարապարտ ծախուց տակ կմանէր և այնպիսի հրաշափառ եկեղեցի այնպէս տեղ կշնէր՝ ուր բնական անջուր ու անջրդի էր . վասն զի առապար էր . և ջուրը հեռաւոր տեղէ բերելով՝ ձորերէ և ապառաժ քարերէ կանցուցանէր , ինչպէս սառըն կտեսնենք , հարկաւ շուտով ևս պիտի տերէին ջրանցքը , և առապարութիւնն պիտի անհիտանային . ի՞նչ էր պատճառն ուրեմն որ Ընող սուրբ Նայրապետը՝ հայրապետանոցում չի նստաւ վերսախն ի մայրն եկեղեցեաց ի Քաղաքուդաշտի , քան թէ ահազին ծախուց ծանրութեան բեռն շալակեց . եթէ ամայի էր Կաթուղիկէն Վաղարշապատայ , արդէն մեծագումար զբամք ևս առձեռն ու նէր Ընող Նայրապետան , ընդէր զայն չի նորոգեց . իսկ եթէ շին

էր , ընդէր և զսուրբ Գրիգոր իւր բնակութեան համար շինեց :
— Թէրեւ Ընող անուն ժառանգելու :

Մեր աղջային պատմութեանց թերի կողմերն էլ այնպիսի բաներ են , զորոնք լուելով պատմիչք , հաղար ու մէկ կարծեաց մէջ կթողուն զյետագայոյ :

Պատմութիւնը ցոյց կտայ մեղ երկու առիթ , որով սուրբ հայրապետն Աերսէս “Ի քաղաքի դաշտի , շինեց զսուրբն Գրիգոր . առաջինն էր , որ Կոստանդին կայսեր գանձիւքը շինեց” որ Ներակլ կայսեր որդին էր . “Եւ ի նաւակատիս , կվայէ որ կոչեաց զթագաւորն Նուուոց , . (Մովսէս Կաղաք . Գ . ԺԵ :)

Երկրորդ առիթն էր , որ սրբոյն Գրիգորի նշխարքը ամփուփեց սուրբ հայրապետը եկեղեցւոյ չորս սեան հաստահեղոյս հիմանց ներքոյ , զոր բերած էր ի Վաղարշապատ Գրիգոր Մամիկոնեան իշխանը ի Թորդանայ . իսկ գրիստոսադրոշ և ըզապատուական զլուխն կվայէ Յովհ . Կաթուղիկոս թէ՝ “ոչ ի խորոջ , այլ արտաքոյ ի գղրոցի եղեալ , դնէ ի գանձարան աստուածութեանն . . . և ի բժշկութիւն ախտակրելոցն , :

Եյլ յաւ է յոյժ և խնդիր միշտ հետաքրքրական և փափկելի , թէ ուր մնաց յետ ժամանակաց և ի՞նչ եղաւ այս տիրուոր գանձն , պատուական զլուխն . որոյ համար և ոչ մի պատմիչք չեն առնել յիշատակութիւն կամ տալ տեղեկութիւն ի ծանօթութիւն յետագայից :

Թա՞ղ զայս , մեր հաւատոյ սուրբ հօր “նշխարս ոսկերաց , այսքան դարաւոր ժամանակ բաժանեալ զրուած ի ներքոյ չորից սեանց հաստահեղուսից՝ եկեղեցին Փրկչական 1000 թուականին , որ հարիւրաւոր տարի յառաջ աւերուած էր ի Տաճկանին , որ հարկէ տարիի զումարով շինուածքն կաց ու կործանուած , ի հարկէ օտարի զումարով շինուածքն էր այսքան միայն կարող էր տեսել , որ կզօշոտէր թշնամու աշխարք . յօրէ անտի մինչև ցայսօր բարեպաշտ ու վիայասէր Նայրապետ գոնէ միանգամ ևս միտք չմերեց այս անգին գանձն Աստուածային ի խորոց անտի ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից հանել , և փոխանակ զլսոյն՝ զայն դնել “արտաքոյ ի գղրոցի

իպարձանս հաւատոյ քըլիստոնէական կարգաց՝ ի յօյս բորեաց փափազողացն նմա,,,—երբ իսպառ կործանած է սուրբ Գրիգոր և հողի հաւասար եղած;—Այսպէս ահա կպատուեմք մեր քըլիստոնէական սրբութիւնքն և ազգային հնութիւնք:

Իսկ անդ ի Ա. Գրիգոր որ յԱռապարին, կաթողիկոսարան շինելու կամ Մենաստան պարապելու համար պատմիչք մէկմէկէ առնլով, կվկայեն որ Կերսէս Գրդ շինողն ասացեալ Խաթուղիկոս, զուրբ Գրիգոր յանուն երկնաւոր զուարթնոց կառուցանելին ետքը, շուրջանակի պարապեց զայն, և մենաստանի մէջ կանգնեց ոչ միայն իւր համար յարկս բնակութեան կոփածոյ քարով, այլ և “կարգեալ կացուցանէր ինմա, կդրէ Պատմոբանն, ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց,, .ըստ որում Դմբայ և Արտաշատ քաղաքաց անապարհը ընդ այն կանցանէր:

Ուստի Վասար գետէն ջուր բերելով մինչեւ անդ, գրեթէ չորս ժամ հեռաւորութենէ, Առարապարի բոլոր շրջակայ աւագուտ գաշտավայրը հերկելու դիւրացրուց, այդի և բուրաստան անկեց. որոց քարաշար հիմունքը գեռ ևս կնշմարուին տեղ տեղ գետնի հաւասարութեան վրայ Առապարի հիւսիսակողմը մերձ ի Վաւթառաւածոր տեղին:

— Վասար գետ, ինչպէս յայտնի է Վաղարշապատայ պատմութենէն եր. 39. “իդ գաւառէն կսկզբնաւորի, Արայի լերին արեւմտեան կողմէն անցանելով, կմանի Արագածոտն գաւառ Սաղմոսավանքի խորածորը, անտի զառ ի վայր իջնելով մինչեւ յԱշտարակ, Օշական գիւղիներքեւ կթափի Արարատեան գաշտ. ուստի սուրբ Գրիգորն Առապարի գետի արեւելեան հարաւային կողմը կանկանի համարեան երկու ժամ հեռաւորութեամբ:

Հին ժամանակից հետէ, Վասար գետէն երկու Առու հանած են դէպ Արարատեան դաշտը, Արայի լերին յառաջը առած ծամանակից հարաւայ ընդարձակ լեռնադաշտի և առապարի միջով; Առաջինը սկսուած է “իդ գաւառէի Աստուածընկալ գիւղի առջենը, որ գետի արեւելեան եղերքէն անցնելով, յիշեալ լերին

հանդէպ յարեւմտից կելանէ ընդարձակ լեռնադաշտը, և այս տեղ կըկորուսանէ իւր հետքը. որոյ արեւելից կտարածուի Խ-ղուարդայ հանդը, և հարաւոյ կողմից ի խոնարհ ուղակի սուրբ Գրիգորի Վուապարը կերեի գրեթէ երեք ժամու հեռաւորութեամբ:

Երկրորդ առուն հանած են Աշտարակ գիւղի ներքեւ որ յԱրագածոտն, ձորի մէջ, որ գետի արեւելեան եղերքէն բարձր քարափի տակէն անցնելով փոքր տեղ, զուրս կդայ Առապար դաշտի երեսը, Օշականայ Գետառ ասացեալ տեղէն փոքր ինչ վեր. և վերը յիշուած լեռնադաշտէն ի խոնարհ զառ ի վայր առապարները կոռողէ, մինչեւ սուրբ Գրիգորի ասացեալ այգետեպարները կոռողէ, մինչեւ սուրբ Գրիգորի յառաջ. զոր վերը յիշեցինք, ի գլուխ զերը Վաւթառածորի յառաջ. զորց մերձ է և Առուբն Գրիգոր Վաղարշապատայ այգեաց, որոց մերձ է և Առուբն Գրիգոր յԱռապարին, ուստի հաւանական է որ այս առուն հանած լինի յինող Ա. Այրապետն Կերսէս և բոլոր աւագախիտ վայրս Ա. Գրիգորի “ի գործ արկեալ,, :

Ինախնեաց անտի այս Առուն ևս աւերուած էր մինչեւ մեր ժամանակ. և կըկոչուի Տկահանի առու. այս ինքն քարափի տաշկից հանած:

Առուր Լշմիածնի Ոինողի անդամք տեսնելով Աթոռոյս Օշական գիւղի նեղութիւնը վարելահողի սակաւութեան մասին, շական գիւղոյ մշակութեամբ և Աթոռոյ ծախսով հանեցին այս գիւղացւոց մշակութեամբ և Նորա տակն եղած բոլոր անջրդի և քար-Տկահանի առուն, և նորա տակն եղած բոլոր անջրդի և քար-Քարուտ Առապարները բաժանելով Օշականայ բնակչաց վրայ, առիթ եղեն այն ընդարձակ ամայի և անջրդի դաշտերը ուուզելու և ցանելու, (յամին 1865 և 1866). ի մեծ օգուտ Աթոռոյս, որոյ սեպհականութիւն է, և ի բարեկեցութիւն Օշականու բնակչաց:

Վերջ տալով աստանօր Վաղարշապատայ հինգ եկեղեցեաց ստորագրութեանը, կիսոստանամք, որ եթէ միջոցները ներեն և ժամանակ ունենամ, ի յառաջակայ գարնան պատրաստենք նաև Արագածոտն գաւառի և Արշարունեաց

մէջն եղած նախնական քաղաքաց և գաստակերտից թէ չայշ
կազմոց ժամանակից և թէ Արշակունեաց, ստորագրութիւն-
ները աշխարհագրական տեղեկութեամբ, որք Արարատեան
դաշտի մէջ կհամարուին Երասխայ հիւսիսային և հարաւային
կողմերը, որոնք են Արմակիր յԱրագածոտն. Փառախոտ, Յու-
լակերտ, Երուանդաշատ և Երուանդակերտ նաև Արշակաւան
յԱրշարունիս, կամ յԵրասխաձոր. Դվին և Արտաշատ՝ ի
դաշտն Դմբայ, և այլն. որոց պատմական տեղեկութիւնները
առ ձեռն ունինք, միայն նոցա զիւքը տեսնելու և տեղագրու-
թիւն անելու կպակասի մեղ միջոց:

Գիւն է 50 ԿՈՊ. — ԿՈՄ 9 ԴԱՀԵԿԱՆ ՕՍՄԱՆ.



ՀՀ Ազգային գրադարան

NL0331409

